Հավելված N 1
ՀՀ կառավարության 2016 թվականի
դեկտեմբերի 29-ի N 1378 - Ն որոշման

«Ձև N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ГЛАВНОЕ УПРАВЛЕНИЕ ГРАЖДАНСКОЙ АВИАЦИИ
REPUBLIC OF ARMENIA
GENERAL DEPARTMENT OF CIVIL AVIATION

Հ Ա Վ Ա Ս Տ Ա Գ Ի Ր
ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
СЕРТИФИКАТ НА ВЫПОЛНЕНИЕ РЕГУЛЯРНЫХ КОММЕРЧЕСКИХ АВИАПЕРЕВОЗОК
REGULAR COMMERCIAL AIR SERVICES CERTIFICATE

Սույնով հաստատվում է, որ

Настоящим удостоверяется что

This certifies, that

Ավիաընկերություն (անվանումը)

Авиакомпания (Название)

Airline(Name)

Գտնվելու վայրը	**Адрес**	**Adress**
Հեռախոսահամարը	Телефон	Telephone
Ֆաքսը	Факс	Fax
E-mail	E-mail	E-mail

Համապատասխանում է «Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին և դրանում նշված սույն հավաստագիրը տալու հետ կապված համապատասխան շահագործողական նորմատիվային կանոններին:
Ավիաընկերությունը հանդիսանում է առևտրային օդային

Отвечает требованиям “Закона об Авиации” Республики Армения и соответствующим эксплуатационным нормативным правилам, предписанным в нем в отнощении выдачи настоящего сертификата.
Авиакомпания является авиакомпанией выполняющей

Complies with the requirements under the “Aviation Law” of the Republic of Armenia and related operating regulations and rules prescribed thereunder for the issuance of this Certificate.
This airline is a commercial air transportation operating

փոխադրումներ իրականացնող ավիաընկերություն, որին թույլատրվում է իրականացնել ուղևորային, բեռնային և փոստային փոխադրումներ՝ սույն հավաստագրին կից հավելվածով սահմանված երթուղիներով: Սույն հավաստագիրն ուժի մեջ է օդանավ շահագործողի վկայականի հետ միասին ներկայացվելու դեպքում:	коммерческие воздушные перевозки, которой разрешается выполнять пассажирские, грузовые и почтовые воздушные переввозки по маршрутам указанным в Приложении к настоящему Сертификату. Настоящий Сертификат действителен при представлении совместно с Сертификатом эксплуатанта.	airline, permitted to operate passenger, cargo and mail air transportation services on the routes specified in Annex to this Certificate. This Certificate is valid when submitted with the Air Operator Certificate.
Օդանավի տիպը	Тип воздушного судна	Type of Aircraft

Հավաստագրի համարը
Номер Сертификата
Certificate number

Տալու ամսաթիվը
Дата выдачи
Date of issue

Գլխավոր վարչության պետ
Начальник главного управления
Director General»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2016 թվականի
դեկտեմբերի 29-ի N 1378 - Ն որոշման

«Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
օգոստոսի 6-ի N 1006 - Ն որոշման

Կ Ա Ր Գ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օդանավ շահագործողների (այսուհետ՝ օդանավ շահագործողների) կողմից երկու և ավելի ոչ կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվությունների ստացման նպատակով ներկայացված հայտերի ընդունման, թույլտվություն տալու կամ թույլտվության տրամադրումը մերժելու, թույլտվության գործողության կասեցման, դադարեցման, տրամադրված թույլտվության մեջ փոփոխություններ կատարելու հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի պահանջներին ու պայմաններին համապատասխանելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված օդանավ շահագործողներին երկու և ավելի ոչ կանոնավոր առևտրային օդային հաղորդակցություններ իրականացնելու նպատակով ներկայացված հայտի հիման վրա տրվում է Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս երկու և ավելի ոչ կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն:

3. Ելնելով օդային փոխադրումների ծավալների, հաճախականությունների, ավելացման և պակասեցման անհրաժեշտությունից՝ Հայաստանի Հանրապետության օդանավ շահագործողի կողմից Հայաստանի Հանրապետության տարածք և տարածքից դուրս երկու և ավելի ոչ կանոնավոր օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն կրողի կողմից ներկայացված հայտի հիման վրա կատարվում է տրամադրված թույլտվության փոփոխություն՝ սույն կարգի III-րդ գլխի դրույթներով նախատեսված ընթացակարգերով:

II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՅՏԸ

4. Թույլտվություն ստանալու համար օդանավ շահագործողները հայտը (այսուհետ՝ հայտ) և դրան կից փաստաթղթերը առցանց կարող են ներկայացնել սույն կարգով սահմանված կանոններով էլեկտրոնային կառավարման համակարգի (www.e-gov.am կայքէջ) «Լիցենզիաների ստացման հայտերի ընդունման համակարգ»-ի «Օդային հաղորդակցություն» բաժնում:

Օդանավ շահագործողները կարող են հայտ ներկայացնել նաև թղթային (առձեռն կամ փոստով) տարբերակով:

5. Առցանց հայտ ներկայացնելու համար, հայտատուն նախապես գրանցվում է «Օդային հաղորդակցություն» բաժնում և ստանում է համակարգում բացված անձնական տիրույթ մուտք գործելու և առցանց հայտեր ներկայացնելու համար անհրաժեշտ վավերապայմաններ:

6. «Օդային հաղորդակցություն» բաժնի համապատասխան ծրագրային տիրույթում գրանցված օդանավ շահագործողի կողմից նախատեսվող օդային հաղորդակցության իրականացման օրվանից առնվազն 15 (տասնհինգ) աշխատանքային օր առաջ հայտ ներկայացնելու նպատակով գրանցված անձի համար բացված անձնական տիրույթից լրացվում է կայքէջում տեղադրված համապատասխան հայտի էլեկտրոնային ձևաթուղթը՝ համաձայն սույն կարգի Ձև N 1-ի: Հայտի էլեկտրոնային ձևաթուղթը լրացվելուց և հայտատուի էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվելուց հետո՝ հաստատված հայտի ֆայլը մուտքագրվում է (վերբեռնվում է) կայքէջի դիմումները ներկայացնելու էլեկտրոնային համակարգ:

7. Հայտին կից վերբեռնվում են հետևյալ փաստաթղթերի տեսաներածված պատճենները (թղթային տարբերակով հայտ ներկայացնելու դեպքում՝ պատճենները).

1) օդանավ շահագործողի վկայականի պատճենը.

2) օդանավի, ուղևորների, ուղեբեռի և երրորդ անձանց նկատմամբ պատասխանատվության ապահովագրության վկայականները (սերտիֆիկատները).

3) նախատեսվող երկու և ավելի ոչ կանոնավոր օդային փոխադրումների ծրագիրը.

4) ուղևորների, ուղեբեռի, բեռի և փոստի օդային փոխադրումների իրականացման կանոնները.

5) այլ տեղեկություններ, որոնք, ըստ օդանավ շահագործողի, վերաբերելի են և կարող են նպաստել օդային ուղու շահագործման թույլտվություն ստանալու գործընթացին:

8. Էլեկտրոնային տարբերակով ներկայացված հայտին կից, սույն կարգի պահանջներին համապատասխան ներկայացնելու ենթակա փաստաթղթերի

բնօրինակների տեսաներածված պատճենները ներկայացվում են հետևյալ ձևաչափով.

1) փաստաթղթերի տեսաներածված պատճենները պետք է ներկայացվեն PDF PDF կամ JPEG ֆորմատի ֆայլերով.

2) փաստաթղթերի բնօրինակները պետք է տեսաներածված լինեն գունավոր՝ առնվազն 300 ՀՏՎ (DPI) խտությամբ, այնպես, որպեսզի փաստաթղթի տեսաներածված պատճենի ֆայլը պարունակի բնօրինակ փաստաթուղթն ամբողջությամբ:

9. Օդանավ շահագործողները թղթային տարբերակով հայտը ներկայացնում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն (այսուհետ՝ Լիազորված մարմին):

10. Թղթային տարբերակով հայտ ներկայացնելու դեպքում օդանավ շահագործողները ներկայացնում են e-govէլեկտրոնային կառավարման համակարգի «Օդային հաղորդակցություն» բաժնում ներբեռնված հայտը՝ համաձայն սույն կարգի Ձև N 1-ի և հայտին կից տեղեկություններն ու փաստաթղթերի պատճենները՝ համաձայն՝ համաձայն սույն կարգի 7-րդ և 8-րդ կետերի պահանջների:

11.Թղթային տարբերակով ներկայացվող հայտին կցվող փաստաթղթերի պատճենները հաստատվում են օդանավ շահագործողի լիազորված անձի կողմից՝ ստորագրությամբ:

12. Էլեկտրոնային տարբերակով ներկայացվելուց անմիջապես հետո հայտը և կից փաստաթղթերը ավտոմատացված էլեկտրոնային համակարգի միջոցով փոխանցվում են Լիազորված մարմնի համակարգին:

13. Էլեկտրոնային եղանակով ներկայացված հայտը համարվում է ընդունված՝ e-gov էլեկտրոնային կառավարման համակարգից Լիազորված մարմնի համակարգին փոխանցվելու պահից, իսկ ոչ աշխատանքային օրերին կամ աշխատանքային օրերի՝ ոչ աշխատանքային ժամերին, հայտը Լիազորված մարմնի համակարգին փոխանցվելու դեպքում՝ այն ներկայացված է համարվում հայտը e-gov էլեկտրոնային կառավարման համակարգի «Օդային հաղորդակցություն» բաժնում մուտքագրվելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 09:00-ին: Դիմումի մուտքագրված լինելու փաստը հավաստվում է հետադարձ ծանուցմամբ, որը պարունակում է 12-նիշանոց ծածկագիր: Հայտարարատուն դիմումի ընթացքին կարող է հետևել նշված 12-նիշանոց ծածկագրով համակարգ մուտք գործելու միջոցով: Հայտը թղթային տարբերակով ներկայացնելու դեպքում՝ այն ներկայացված է համարվում Լիազորված մարմնի կողմից մուտքագրվելու պահից:

III. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼԸ ԿԱՄ ՄԵՐԺԵԼԸ

14. Սույն կարգով սահմանված եղանակներով էլեկտրոնային տարբերակով ներկայացված հայտը Լիազորված մարմինի համակարգին փոխանցվելուց հետո.

1) եթե հայտի ուսումնասիրության ընթացքում պարզվում է, որ հայտը կամ դրան կից ներկայացված փաստաթղթերի տեսաներածված պատճենները չեն համապատասխանում սույն կարգի 8-րդ կետով սահմանված պահանջներին, կամ թերի են, ապա Լիազորված մարմինը հայտը իր համակարգին փոխանցվելուց հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին առցանց տեղեկացնում է Օդանավ շահագործողին՝ առաջարկելով 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում վերբեռնել թերի (բացակայող) փաստաթղթերը:

Թերությունները չվերացնելու դեպքում հայտի ընդունումը մերժվում է, որի մասին հայտատուն առցանց տեղեկանում է իր համար բացված անձնական տիրույթում՝ սահմանված 3 (երեք) աշխատանքային օրվա ավարտից հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում

2) եթե էլեկտրոնային տարբերակով ներկայացված հայտն ամբողջական է, ապա Լիազորված մարմնի կողմից մուտքագրված Հայտը Լիազորված մարմնի համակարգին փոխանցվելուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրման նպատակով ներկայացվում է Լիազորված մարմնի համապատասխան ստորաբաժանումներին:

Հայտի ուսումնասիրության և համաձայնեցման ընթացքում հաշվի է առնվում ներկայացվող փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին, իսկ դրանց բացակայության դեպքում՝ միջազգային օդային հաղորդակցությունները կարգավորող նորմատիվ ակտերի դրույթներին, ինչպես նաև սույն կարգի պահանջներին:

15. Սույն կարգով սահմանված եղանակներով թղթային տարբերակով ներկայացված հայտը Լիազորված մարմնի կողմից մուտքագրվելուց հետո.

1) եթե հայտի ուսումնասիրության ընթացքում պարզվում է, որ հայտը կամ դրան կից ներկայացված փաստաթղթերի պատճենները անընթեռնելի կամ թերի են, ապա Լիազորված մարմինը հայտը մուտքագրվելուց հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնում է Օդանավ շահագործողին՝ առաջարկելով 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում լրացնել թերի (բացակայող) փաստաթղթերը:

Թերությունները չվերացնելու դեպքում հայտի ընդունումը մերժվում է, որի մասին հայտատուն գրավոր տեղեկացվում է.

2) եթե թղթային տարբերակով ներկայացված հայտն ամբողջական է, ապա Լիազորված մարմնի կողմից մուտքագրված Հայտը մուտքագրվելուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրման նպատակով ներկայացվում է Լիազորված մարմնի համապատասխան ստորաբաժանումներին:

Սույն գլխում նշված հայտերի քննության և եզրակացության տրամադրման գործընթացում հիմք են ընդունվում հայտի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին, իսկ դրանց բացակայության դեպքում՝ միջազգային օդային հաղորդակցությունները կարգավորող նորմատիվ ակտերի դրույթներին:

16. Երկու և ավելի ոչ կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն տալու կամ մերժելու մասին հրամանի օրինակը թույլտվության (Ձև N 2) (տեսաներածված պատճենի) հետ միասին, իսկ հայտի մերժման դեպքում՝ մերժման մասին Լիազորված մարմնի ղեկավարի հրամանի օրինակը (օրինակի տեսաներածված պատճենը) 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում վերբեռնվում է կայքէջում օդանավ շահագործողի համար բացված անձնական տիրույթում, իսկ թղթային տարբերակով հայտի ներկայացման դեպքում՝ Հրամանի օրինակը թույլտվության (Ձև N 2) (տեսաներածված պատճենի) հետ միասին, իսկ հայտի մերժման դեպքում՝ մերժման մասին Լիազորված մարմնի ղեկավարի հրամանի օրինակը արձակման օրվանից (օրինակի տեսաներածված պատճենը) 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է (առձեռն կամ փոստով) Օդանավ շահագործողին:

Մերժման մասին հրամանում նշվում են մերժման իրավական հիմքերը: Հայտը չի կարող մերժվել աննպատակահարմարության պատճառաբանությամբ:

17. Լիազորված մարմինը թույլտվության տրման օրվանից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում թույլտվության մասին հեռագրային կապի միջոցով տեղեկացնում է Հայաստանի Հանրապետությունում նպատակակետ հանդիսացող օդանավակայանին և օդանավակայանային վերգետնյա ծառայություններ մատուցող կազմակերպություններին:

18. Հայտը մերժվում է, եթե սույն կարգի 7-րդ կետով նախատեսված փաստաթղթերը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված պահանջներին:

19. Սույն գլխում նշված հայտերի քննության և եզրակացության տրամադրման գործընթացում հիմք են ընդունվում հայտի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի, իսկ դրանց բացակայության դեպքում՝ միջազգային օդային հաղորդակցությունները կարգավորող նորմատիվ ակտերի դրույթներին:

20. Թղթային տարբերակով ներկայացված հայտով տրամադրված թույլտվության կորստի կամ վնասման դեպքում Լիազորված մարմինը թույլտվություն ստացած անձին տրամադրվում է դրա կրկնօրինակը՝ համապատասխան դիմումը Լիազորված մարմնի կողմից մուտքագրվելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Թույլտվության կրկնօրինակի վերին աջ անկյունում կատարվում է «Կրկնօրինակ» նշագրումը:

IV. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

21. Օդային հաղորդակցությունների իրականացման համար նախատեսված օդանավի տիպի և հաճախականության փոփոխությունների դեպքում Օդանավ շահագործողը համապատասխան փոփոխությունները հավաստող փաստաթղթերը (այսուհետ՝ Փաստաթղթեր) վերբեռնում է e-gov էլեկտրոնային կառավարման համակարգի համապատասխան բաժին կամ թղթային (առձեռն կամ փոստով) տարբերակով ներկայացնում է Լիազորված մարմին՝ նախատեսվող օդային հաղորդակցության իրականացման օրվանից առնվազն 6 (վեց) աշխատանքային օր առաջ:

22. Էլեկտրոնային տարբերակով ներկայացվելուց անմիջապես հետո Փաստաթղթերը ավտոմատացված էլեկտրոնային համակարգի միջոցով փոխանցվում են Լիազորված մարմնի համակարգին:

23. Էլեկտրոնային եղանակով Փաստաթղթերը համարվում են ներկայացված՝ դրանք Լիազորված մարմինի համակարգին փոխանցվելու, իսկ ոչ աշխատանքային օրերին կամ աշխատանքային օրերի՝ ոչ աշխատանքային ժամերին Լիազորված մարմինի համակարգին փոխանցվելու դեպքում՝ հայտը ներկայացված է համարվում կայքէջի հայտերը ներկայացնելու էլեկտրոնային համակարգում հայտը մուտքագրվելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 09:00-ին:

24. Թղթային տարբերակով Փաստաթղթերը ներկայացնելու դեպքում՝ դրանք համարվում են ներկայացված Լիազորված մարմնի կողմից մուտքագրվելու պահից:

25. Էլեկտրոնային կամ թղթային տարբերակով Փաստաթղթերը ստանալուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում դրանք ուսումնասիրման նպատակով ներկայացվում են Լիազորված մարմնի համապատասխան ստորաբաժանումներին:

26. Թույլտվության մեջ փոփոխություն կատարելու մասին Հրամանի օրինակը (տեսաներածված պատճենի) հետ միասին, իսկ թույլտվության մեջ փոփոխության կատարումը մերժելու դեպքում՝ մերժման մասին Լիազորված մարմնի ղեկավարի հրամանի օրինակը արձակման օրվանից (օրինակի տեսաներածված պատճենը) 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում Փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակով ներկայացման դեպքում՝ վերբեռնվում է կայքէջում օդանավ շահագործողի համար բացված անձնական տիրույթում, իսկ Փաստաթղթերի թղթային տարբերակով ներկայացման դեպքում՝ ուղարկվում է (առձեռն կամ փոստով) օդանավ շահագործողին: Մերժման մասին հրամանում նշվում են մերժման իրավական հիմքերը:

27. Լիազորված մարմինը 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում փոփոխությունների մասին հեռագրային կապի միջոցով տեղեկացնում է Հայաստանի Հանրապետությունում նպատակակետ հանդիսացող օդանավակայանին և օդանավակայանային վերգետնյա ծառայություններ մատուցող կազմակերպություններին:

28. Օդանավի վկայականներում, օդանավ շահագործողի վկայականում կամ օդանավ շահագործողի վկայականին կից հավելվածներում կամ հատուկ դրույթներում փոփոխությունների դեպքում՝ օդանավ շահագործողը համապատասխան փոփոխությունները հավաստող փաստաթղթերը (այսուհետ՝ Փաստաթղթեր) էլեկտրոնային տարբերակով վերբեռնում է e-gov էլեկտրոնային կառավարման համակարգի «Օդային հաղորդակցություն» բաժնում բացված անձնական տիրույթում կամ թղթային տարբերակով ներկայացնում է Լիազորված մարմին՝ նախատեսվող օդային հաղորդակցության իրականացման օրվանից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ: Նույն եղանակով օդանավ շահագործողը այդ մասին ծանուցում է չվերթի համարի փոփոխության դեպքում:

29. Լիազորված մարմինը Փաստաթղթերի վերաբերյալ դրական եզրակացության դեպքում այդ մասին հեռագրային կապի միջոցով տեղեկացնում է Հայաստանի Հանրապետությունում նպատակակետ հանդիսացող օդանավակայանին և օդանավակայանային վերգետնյա ծառայություններ մատուցող կազմակերպություններին: Փաստաթղթերի վերաբերյալ բացասական եզրակացության դեպքում՝ Լիազորված մարմինը տեղեկացնում է (առցանց կամ գրավոր) օդանավ շահագործողին՝ դիմումի ստացման օրվանից հետո 6-րդ աշխատանքային օրը:

V. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՕԴԱՅԻՆ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄՆ ՈՒ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

30. Թույլտվության գործողությունը կասեցվում է հետևյալ դեպքերում.

1) Եթե թույլտվությամբ նախատեսված գործունեությունն իրականացվել է տվյալ գործունեությունը կանոնակարգող ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի խախտումներով,

2) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ժամկետներում պետական տուրքի գանձման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցման պարտավորությունները չկատարելու դեպքում,

3) թույլտվություն կրող օդանավ շահագործողների օդանավերի տեսչական ստուգումների արդյունքում հայտնաբերված թռիչքների անվտանգության թերությունների առկայության դեպքում:

31. Թույլտվության գործողությունը կասեցվում է մինչև հայտնաբերված խախտումների վերացումը կամ մանրամասն ուսումնասիրությունների անցկացումը,

32. Թույլտվության գործողությունը կասեցվում է Լիազորված մարմնի ղեկավարի հրամանով: Լիազորված մարմնի ղեկավարի հրամանը արձակման օրվանից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում վերբեռնվում է օդանավ շահագործողների համար e-gov.am էլեկտրոնային կառավարման համակարգի «Օդային հաղորդակցություն» բաժնում օդանավ շահագործողների համար բացված անձնական տիրույթում և/կամ տրամադրվում է գրավոր ծանուցմամբ:

33. Թույլտվության գործողությունը վերսկսվում է Լիազորված մարմնի ղեկավարի համապատասխան հրամանով, երբ օդանավ շահագործողը վերացրել է կասեցման համար հիմք հանդիսացած պատճառները և e-gov.am էլեկտրոնային կառավարման համակարգի «Օդային հաղորդակցություն» բաժնում իր համար բացված անձնական տիրույթում վերբեռնել է կասեցման համար հիմք հանդիսացած պատճառների վերացման մասին գրության և համապատասխան հիմքերի տեսաներածված պատճենները կամ դրանք ներկայացրել է Լիազորված մարմին թղթային տարբերակով:

34. Թույլտվության վերսկսման մասին Լիազորված մարմնի ղեկավարի հրամանը արձակման օրվանից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում վերբեռնվում է օդանավ շահագործողների համար e-gov.am էլեկտրոնային կառավարման համակարգի «Օդային հաղորդակցություն» բաժնում բացված անձնական տիրույթում կամ գրավոր ծանուցմամբ տրամադրվում է Օդանավ շահագործողին:

35. Եթե խախտումների վերացման համար տրված ժամկետում կամ ուսումնասիրության անցկացման արդյունքում խախտումները չեն վերացվել, ապա Լիազորված մարմնի կողմից թույլտվության գործողությունը այդ մարմնի ղեկավարի հրամանով դադարեցվում է:

36. Թույլտվության գործողության դադարեցման մասին Լիազորված մարմնի ղեկավարի հրամանը արձակման օրվանից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում վերբեռնվում է e-gov էլեկտրոնային կառավարման համակարգի «Օդային հաղորդակցություն» բաժնում օդանավ շահագործողների համար բացված անձնական տիրույթում կամ գրավոր ծանուցմամբ տրամադրվում է փոխադրողին:

VI. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

37. Օդանավ շահագործողները, թղթային տարբերակով հայտերը ներկայացնում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն՝ «Զվարթնոց» օդանավակայան 0042, քաղաք Երևան:

38. Օդանավ շահագործողները, էլեկտրոնային տարբերակով հայտերը ներկայացնում են www.e-gov.am կայքէջի «Օդային հաղորդակցություն» բաժնում:

39. Օդանավ շահագործողները օդանավերի փոփոխության դեպքում՝ համապատասխան փաստաթղթերը ներկայացնում են թղթային տարբերակով Լիազորված մարմին, Զվարթնոց օդանավակայան 0042, քաղաք Երևան, կամ www.e-gov.am ինտերնետային կայքէջի «Օդային հաղորդակցություն» բաժնում բացված անձնական տիրույթից էլեկտրոնային ծանուցում ուղարկելով, կամ cds@armats.am էլեկտրոնային հասցեով:

Ձև 1

ՀՀ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴԵՊԻ ՀՀ ՏԱՐԱԾՔ ԵՎ ՀՀ ՏԱՐԱԾՔԻՑ ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՉՎԵՐԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՅՏ
REQUEST FOR APPROVAL OF RA AIR OPERATOR'S SCHEDULED AND TWO AND MORE NON-SCHEDULED FLIGHTS TO/FROM ARMENIA

ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ (պետությունը): _____
NAME OF OPERATOR (state):_____

Կոնտակտային անձի անուն: Contact Person Name:		
Փոստային հասցե: Mailing Address:		
Հեռախոս: Telephone:	Ֆաքս: Fax:	Էլ-Փոստի հասցե: Email Address:
ԻԿԱՕ/ԻԱՏԱ կոդ: ICAO/IATA code:		
ԱՖՏՆ: AFTN:		

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ:
_____
NAME OF ARMENIAN REPRESENTATIVE:
_____

Կոնտակտային անձի անուն: Contact Person Name:		
Փոստային հասցե: Mailing Address:		
Հեռախոս: Telephone:	Ֆաքս: Fax:	Էլ-Փոստի հասցե: Email Address:

ՀՀ օդանավակայաններում տեխնիկական սպասարկման (ապահովման) մասին տեղեկություն (պայմանագիր կամ այլ համապատասխան փաստաթուղթ)
Information (agreement or other applicable document) about technical assistance (maintenance) at Armenian airports

ՎԵՐԳԵՏՆՅԱ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԳՈՐԾԱԿԱԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ: _____

NAME OF GROUND HANDLING AGENT: _____

Փոստային հասցե: Mailing Address:		
Հեռախոս: Telephone:	Ֆաքս: Fax:	Էլ-Փոստի հասցե: Email Address:

ՉՎԵՐԹԻ(ՆԵՐԻ) ՏԵՍԱԿԸ - Նշել համապատասխան վանդակներում.
DETAILS OF FLIGHT(S) - Please tick as appropriate.

1) ՈՒՂԵՎՈՐԱՅԻՆ/PASSENGER: ☐ ԲԵՌՆԱՅԻՆ/ CARGO: ☐
2) ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ԱՆՈՒՆԸ (առկայության դեպքում): _____

NAME OF CHARTERER (If applicable): _____

Փոստային հասցե: Mailing Address:		
Հեռախոս: Telephone:	Ֆաքս: Fax:	Էլ-Փոստի հասցե: Email Address:

4) Օդանավ շահագործողի ընկերությունում օտարերկրյա կապիտալի առկայության և բաժնեմասի մասին տեղեկություն
Information about the presence and share of the foreign capital at the aircraft operator's company

5) ՉՎԵՐԹԻ(ՆԵՐԻ) ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ
FLIGHT(S) DETAILS

Չվերթի համար Flight No.	Շահագործման օրեր Operation Days	Երթուղին/ Հատվածները Routing/Sectors	ԺԱՄԱՆՈՒՄ /ՄԵԿՆՈՒՄ ETA/ETD	Չվերթների թիվը Ամսաթիվ/ Շահագործման ժամկետը Number of Flights Date/Period of Ops	Նշումներ Remarks

Հայտին ընթացք կտրվի միայն պահանջվող բոլոր փաստաթղթերի և տեղեկատվության ներկայացման դեպքում:
The application will only be processed when all the required documents and information are submitted.

ՀՀ ավիացիոն իշխանությունը իրավունք ունի պահանջել հավելյալ տեղեկատվություն հայտը ամբողջականացնելու նպատակով:
The Aviation Authority of the RA reserves the right to request additional information to substantiate the application.

6 ՊԱՀԱՆՋՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ: Անհրաժեշտության դեպքում կցել լրացուցիչ էջեր: REQUIRED INFORMATION: Attach supplementary sheets if necessary.	
6.1 Արդյոք շահագործողը առաջին անգամ է դիմում դեպի ՀՀ առևտրային օդային փոխադրումներ իրականացնումու նպատակով: Is the operator applying to operate commercial flight into Armenia for the first time?	Այո / Yes Ոչ / No Եթե "Ոչ", նշել դեպի ՀՀ իրականացրած վերջին առևտրային օդային փոխադրման ամսաթիվը: _____ If "No", please indicate the date of the last previous commercial flight into Armenia: _____
6.2 Շահագործողի պետությունը (եթե տարբերվում է գրանցման պետությունից) State of Operator (if different from State of Registry)	
6.3 Արդյոք օդանավը/օդանավերը հանդիսանում են ԻԿԱՕ-ի 83 ԲԻՍ համաձայնագրի կարգավորման առարկա Is/are the aircraft the subject of an ICAO 83bis agreement	Այո/ Yes Ոչ / No
6.4 Արդյոք չվերթը իրականացվելու է ՀՀ և շահագործողի պետության միջև: Are the intended routes between Armenia and the State of the Operator?	Այո/ Yes Ոչ / No

7 Դեպի ՀՀ և ՀՀ-ից երթուղիներում շահագործման ենթակա օդանավեր (Տիպերը, գրանցման նիշերը) Aircrafts to be operated on the routes to and from Armenia (Types, Registration marks)	

8 ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ: Շահագործողի կողմից ներկայացման ենթակա REQUIRED DOCUMENTATION: To be provided by the Operator		
	8.1 Օդանավ շահագործողի վկայական Air Operators Certificate	Կցված է: Attached.

	8.2 Շահագործման հատուկ դրույթներ Associated Operations Specifications	Կցված է: Attached.
	8.3 Թռիչքային պիտանիության վկայական/կամ Պիտանիության վերանայված վկայական (եթե առկա է) Certificate of Airworthiness and/or Airworthiness Review Certificate (if any)	Կցված է յուրաքանչյուր օդանավի համար: Attached for each aircraft
	8.4 Գրանցման վկայական Certificate of Registration	Կցված է յուրաքանչյուր օդանավի համար: Attached for each aircraft
	8.5 Աղմուկի վկայական կամ համապատասխան այլ փաստաթուղթ: Noise Certificate or equivalent document	Կցված է յուրաքանչյուր օդանավի համար: Attached for each aircraft or type
	Ապահովագրության վկայական (ուղևորների, ուղեբեռի, բեռի, երրորդ անձանց) Certificate of insurance (passenger, baggage, cargo, third party)	Կցված է: Attached
	8.7 Շահագործողի ավիացիոն անվտանգության ծրագիրը Air Operators aviation security programme	Կցված է Attached

ՆՇՈՒՄՆԵՐ
NOTES

1. Եթե շահագործվող օդանավի գրանցման պետությունը և շահագործողի պետությունը տարբեր են, շահագործողները պետք է ներկայացնեն համապատասխան գրություն (անգլերենով) այն մասին, թե ով է իրականացնում օդանավի շահագործման և պիտանիության նկատմամբ վերահսկողությունը, այս պարագայում կիրառելի է նաև պետությունների միջև ԻԿԱՕ-ի 83 ԲԻՍ համաձայնագիրը:

Where the State of Registration of the aircraft operated and the State of the Operator are different, Operators are to provide a letter, in English, stating who has the Operational & Airworthiness control of the aircraft; this may be covered by an ICAO 83bis arrangement between States.

2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ

Եթե օդանավ շահագործողը իրականացնում է օդային հաղորդակցություններ համագործակցային համաձայնագրերի ներքո՝ որպես շահագործող ընկերություն, բոլոր մարքեթինգային ընկերությունները պետք է նշվեն:

CODE SHARE ARRANGEMENTS

In case the air carrier operates flights on code share basis as an operating partner, all marketing partners have to be indicated.

10 Հայտատուի հայտարարությունը և պայմանների ու պահանջների ընդունման հաստատումը: Applicant's declaration and acceptance of Conditions and Requirements
Հայտարարում եմ, որ ունեմ սույն հայտը ավիացիոն իշխանությանը ներկայացնելու լիազորություն և, որ սույն հայտում նշված բոլոր տեղեկությունները և ներկայացված փաստաթղթերը ճշգրիտ են և ամբողջական: Ոչ ամբողջական տեղեկատվությունը կարող է հանգեցնել ուշացումների կամ հայտի մերժման: Վերոնշյալ տեղեկություններում/փաստաթղթերում յուրաքանչյուր փոփոխության, փաստաթղթերը ուժը կորցնելու դեպքում՝ Ավիացին իշխանությունը այդ մասին կտեղեկացվի հնգօրյա ժամկետում: Համաձայն ՀՀ օրենսդրության՝ խախտում է համարվում մոլորեցնելու մտադրությամբ ցանկացած կեղծ փաստաթղթի ներկայացումը՝ թույլտվության տրմանը, երկարացմանը կամ փոփոխությանը նպաստելու նպատակով: Ես հաստատում եմ, որ ես կարդացել և հասկացել եմ սույն հայտում ներառված բոլոր հարցերը և դրույթները: Իմ ներկայացրած պատասխանները ճիշտ են՝ իմ իմացությամբ: I declare that I have the legal capacity to submit this application to the Aviation Authority and that all information and documents provided in this application form are true and complete. Incomplete information may result in delay or rejection of the application. In case of any changes in the above information/documentation, termination of submitted documentation the Aviation Authority will be informed in writing within 5 business days. It is an offence under the legislation of the RA to make, with intent to deceive, any false representation for the purpose of procuring the grant, issue, renewal or variation of permission. I certify that I have read and understood all the questions and statements on this form. The answers I have furnished are true and correct to the best of my knowledge and belief.

Շահագործողի անվանումը Name of Operator	Շահագործողի կոնտակտային անձի անունը և նշանակումը Name of Operator's contact Person & designation	Ստորագրություն/Ամսաթիվ Signature / Date

ՊԱՅՄԱՆՆԵՐ
CONDITIONS

1) Ամբողջ տեղեկատվությունը և փաստաթղթերը պետք է ներկայացված լինեն անգլերեն կամ անգլերեն թարգմանությամբ, կամ ռուսերեն:

All information and documents submitted must be in English or with an English translation or in Russian;

2) Օդանավում գտնվող օդանավ շահագործողի վկայականը, գրանցման վկայականը, թռիչքային պիտանիության վկայականը և նմանատիպ այլ փաստաթղթերը պետք է լինեն վավեր և բոլոր պայմանները, որոնց հիման վրա այդ վկայականները տրվել կամ վավեր են ճանաչվել պետք է պահպանվեն:
Documents such as Air Operator's Certificate (AOC), Certificate of Registration (CoR, Certificate of Airworthiness (CoA) and etc. carried on board the aircraft must be valid at all times, and Any conditions subject to which these certificates were issued or rendered valid must be complied with.

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ:
INSTRUCTIONS

1.1 Լրացնել ընկերության հիմնադրման համապատասխան վկայականում առկա ընկերության ամբողջական անվանումը: Առկայության դեպքում լրացնել նաև ֆիրմային անվանումը, բիզնեսը փաստացի շահագործողի անվանումը և գրանցման համարը:
Please enter the full name of the company as it appears on the Article/Certificate of incorporation of the company. If applicable also enter the Trade Name, Doing-business-as and the Company registration number. In case the applicant is not a company but a natural person, please enter the full name as it appears in your ID Card/Passport.
1.2 Խնդրում ենք լրացնել ընկերության հիմնադրման համապատասխան վկայականում առկա ընկերության գրանցված գրասենյակի հասցեն: Եթե հայտատուն ֆիզիկական անձ է, լրացնել գրանցման հասցեն:
Please enter the address of the registered office as it appears on the Article/Certificate of incorporation of the company. In the case when the applicant is not a company but natural person, please enter the address at which you are registered.

2. Հայտը պետք է լրացվի 10-րդ բաժնում նշված անձի կողմից: Շահագործման և տեխնիկական սպասարկման հետ կապված հարցերը ուղղվելու են այդ անձին:
The application should be completed by the person indicated in Section 10. Queries related to operational and maintenance matters will be referred to this person.

Ձև N 2

Թ ՈՒ Յ Լ Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն 000/20 ____
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ
ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 000/20 ____
TO THE AIRCRAFT OPERATOR OF REPUBLIC OF ARMENIA FOR TWO AND MORE
CHARTER SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE
REPUBLIC OF ARMENIA

Օդանավ շահագործողը
Aircraft Operator
Պատվիրատուն
Charterer
Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը)
Type(s) of aircraft(s)
Հաճախականությունը
Frequency
Երթուղին
Air route
Թույլտվության գործողության ժամկետը
Permission validity ___ _____20__

_____

(պաշտոնը, անունը, ազգանունը) (ստորագրություն) _____ _____ ____
(position title, name, surname) (signature)
Կ.Տ.
Seal
(տալու ամսաթիվը)
(date of issue)»: »:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2016 թվականի
դեկտեմբերի 29-ի N 1378 - Ն որոշման

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2015 թվականի
օգոստոսի 6-ի N 1005 - Ն որոշման

Կ Ա Ր Գ
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են օտարերկրյա օդանավ շահագործողների կողմից Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություններ (այսուհետ՝ թույլտվություն) տալու, դրանց տրամադրման մերժման, գործողության կասեցման և դադարեցման հետ կապված հարաբերությունները:

2. Օտարերկրյա օդանավ շահագործողի կողմից Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կարող են իրականացվել կանոնավոր առևտրային օդային հաղորդակցություններ՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության միջազգային համաձայնագրերը և Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության ու Հայաստանի Հանրապետության անդամակցած միջազգային այլ կազմակերպությունների կողմից հրապարակված միջազգային ստանդարտները և առաջարկվող գործելաձևերը:

3. Օտարերկրյա օդանավ շահագործողին թույլտվությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի համաձայն՝ համապատասխան պետության ավիացիոն իշխանությունների կողմից տվյալ օտարերկրյա օդանավ շահագործողին կանոնավոր փոխադրող նշանակելու մասին գրության առկայության դեպքում:

4. Օտարերկրյա օդանավ շահագործողին կանոնավոր փոխադրող նշանակելու մասին գրությունը ստանալուց հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը (այսուհետ՝ Լիազորված մարմինը) հեռագրային ձևով դրա մասին տեղեկացնում է Հայաստանի

Հանրապետությունում նպատակակետ հանդիսացող օդանավակայաններին և այլ հարակից ծառայություններ մատուցող կազմակերպություններին:

5. Ելնելով օդային փոխադրումների ծավալների, հաճախականությունների ավելացման և պակասեցման անհրաժեշտությունից՝ օտարերկրյա օդանավ շահագործողի կողմից ներկայացված հայտի հիման վրա կատարվում է թույլտվության փոփոխություն՝ սույն կարգի IV գլխի դրույթներով նախատեսված ընթացակարգերով:

II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՅՏԸ

6. Թույլտվություն ստանալու համար օտարերկրյա օդանավ շահագործողները հայտը (այսուհետ՝ հայտ) և դրան կից փաստաթղթերը առցանց կարող են ներկայացնել սույն կարգով սահմանված կանոններով էլեկտրոնային կառավարման համակարգի (www.e-gov.am կայքէջ) «Լիցենզիաների ստացման հայտերի ընդունման համակարգ»-ի «Օդային հաղորդակցություն» բաժնում:

Օտարերկրյա օդանավ շահագործողները կարող են հայտ ներկայացնել նաև թղթային (առձեռն կամ փոստով) տարբերակով:

7. Առցանց հայտ ներկայացնելու համար, հայտատուն նախապես գրանցվում է «Օդային հաղորդակցություն» բաժնում և ստանում է համակարգում բացված անձնական տիրույթ մուտք գործելու և առցանց հայտեր ներկայացնելու համար անհրաժեշտ վավերապայմաններ:

8. «Օդային հաղորդակցություն» բաժնի համապատասխան ծրագրային տիրույթում գրանցված օտարերկրյա օդանավ շահագործողի կողմից նախատեսվող օդային հաղորդակցության իրականացման օրվանից առնվազն 15 (տասնհինգ) աշխատանքային օր առաջ հայտ ներկայացնելու նպատակով գրանցված անձի համար բացված անձնական տիրույթից լրացվում է կայքէջում տեղադրված համապատասխան հայտի էլեկտրոնային ձևաթուղթը՝ համաձայն սույն կարգի Ձև N 1-ի: Հայտի էլեկտրոնային ձևաթուղթը լրացվելուց և հայտատուի էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվելուց հետո՝ հաստատված հայտի ֆայլը մուտքագրվում (վերբեռնվում) է կայքէջի դիմումները ներկայացնելու էլեկտրոնային համակարգ:

9. Հայտին կից վերբեռնվում են հետևյալ փաստաթղթերի տեսաներածված պատճենները (թղթային տարբերակով հայտ ներկայացնելու դեպքում՝ պատճենները).

1) օդանավ շահագործողի վկայականը՝ կից հավելվածներով կամ հատուկ դրույթներով.

2) օտարերկրյա օդանավ շահագործողի ավիացիոն անվտանգության ծրագիրը.

3) հայտում նշված օդային հաղորդակցության իրականացման համար նախատեսված օդանավի թռիչքային պիտանիության, պետական գրանցման և աղմուկի վկայականները.

4) օդային հաղորդակցության իրականացման համար նախատեսված, ուղևորների, ուղեբեռների, բեռների և երրորդ անձանց հանդեպ պատասխանատվության ապահովագրության և (կամ) վերաապահովագրության վկայականները (սերտիֆիկատները).

5) այլ տեղեկություններ, որոնք, ըստ օտարերկրյա օդանավ շահագործողի, վերաբերելի են և կարող են նպաստել օդային ուղու շահագործման թույլտվություն ստանալու գործընթացին:

10. Էլեկտրոնային տարբերակով ներկայացված հայտին կից, սույն կարգի պահանջներին համապատասխան ներկայացնելու ենթակա փաստաթղթերի բնօրինակների տեսաներածված պատճենները ներկայացվում են հետևյալ ձևաչափով.

1) փաստաթղթերի տեսաներածված պատճենները պետք է ներկայացվեն PDF կամ JPEG ֆորմատի ֆայլերով.

2) փաստաթղթերի բնօրինակները պետք է տեսաներածված լինեն գունավոր՝ առնվազն 300 ՀՏՎ (DPI) խտությամբ, այնպես, որպեսզի փաստաթղթի տեսաներածված պատճենի ֆայլը պարունակի բնօրինակ փաստաթուղթն ամբողջությամբ:

11.Օտարերկրյա օդանավ շահագործողները թղթային տարբերակով հայտը ներկայացնում են Լիազորված մարմին:

12. Թղթային տարբերակով հայտ ներկայացնելու դեպքում օտարերկրյա օդանավ շահագործողները ներկայացնում են e-gov.am էլեկտրոնային կառավարման համակարգի «Օդային հաղորդակցություն» բաժնում ներբեռնված հայտը՝ համաձայն սույն կարգի Ձև N 1-ի և հայտին կից տեղեկություններն ու փաստաթղթերի պատճենները՝ համաձայն սույն կարգի 9-րդ և 10-րդ կետերի պահանջների:

13. Թղթային տարբերակով ներկայացվող հայտին կցվող փաստաթղթերի պատճենները հաստատվում են օտարերկրյա օդանավ շահագործողի լիազորված անձի կողմից՝ ստորագրությամբ:

14. Էլեկտրոնային տարբերակով ներկայացվելուց անմիջապես հետո հայտը և կից փաստաթղթերը ավտոմատացված էլեկտրոնային համակարգի միջոցով փոխանցվում են Լիազորված մարմնի համակարգ:

15. Էլեկտրոնային եղանակով ներկայացված հայտը համարվում է ընդունված ՝ e-gov էլեկտրոնային կառավարման համակարգից Լիազորված մարմնի համակարգին փոխանցվելու պահից, իսկ ոչ աշխատանքային օրերին կամ աշխատանքային օրերի՝ ոչ աշխատանքային ժամերին, հայտը Լիազորված մարմնի համակարգին փոխանցվելու դեպքում՝ այն ներկայացված է համարվում

հայտը e-gov էլեկտրոնային կառավարման համակարգի «Օդային հաղորդակցություն» բաժնում մուտքագրվելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 09:00-ին: Դիմումի մուտքագրված լինելու փաստը հավաստվում է հետադարձ ծանուցմամբ, որը պարունակում է 12-նիշանոց ծածկագիր: Հայտատուն դիմումի ընթացքին կարող է հետևել նշված 12-նիշանոց ծածկագրով համակարգ մուտք գործելու միջոցով: Հայտը թղթային տարբերակով ներկայացնելու դեպքում՝ այն ներկայացված է համարվում Լիազորված մարմնի կողմից մուտքագրվելու պահից:

16. Անհրաժեշտության դեպքում՝ Լիազորված մարմինը կարող է դիմել օտարերկրյա օդանավ շահագործողի գրանցման պետության ավիացիոն իշխանություններին՝ ներկայացված փաստաթղթերի վավերականությունը պարզելու և այլ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար:

III. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼԸ ԿԱՄ ՄԵՐԺԵԼԸ

17. Սույն կարգով սահմանված եղանակներով էլեկտրոնային տարբերակով ներկայացված հայտը Լիազորված մարմնի համակարգին փոխանցվելուց հետո.

1) եթե հայտի ուսումնասիրության ընթացքում պարզվում է, որ հայտը կամ դրան կից ներկայացված փաստաթղթերի տեսաներածված պատճենները չեն համապատասխանում սույն կարգի 10-րդ կետով սահմանված պահանջներին, կամ թերի են, ապա Լիազորված մարմինը հայտը իր համակարգին փոխանցվելուց հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին առցանց տեղեկացնում է օտարերկրյա օդանավ շահագործողին՝ առաջարկելով 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում վերբեռնել թերի (բացակայող) փաստաթղթերը:

Թերությունները չվերացնելու դեպքում հայտի ընդունումը մերժվում է, որի մասին հայտատուն առցանց տեղեկանում է իր համար բացված անձնական տիրույթում՝ սահմանված 3 (երեք) աշխատանքային օրվա ավարտից հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում.

2) եթե էլեկտրոնային տարբերակով ներկայացված հայտն ամբողջական է, ապա Լիազորված մարմնի կողմից մուտքագրված Հայտը Լիազորված մարմնի համակարգին փոխանցվելուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրման նպատակով ներկայացվում է Լիազորված մարմնի համապատասխան ստորաբաժանումներին:

Սույն գլխում նշված հայտերի քննության և եզրակացության տրամադրման գործընթացում հիմք են ընդունվում հայտի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին, իսկ դրանց բացակայության դեպքում՝ միջազգային օդային հաղորդակցությունները կարգավորող նորմատիվ ակտերի դրույթներին:

18. Սույն կարգով սահմանված եղանակներով թղթային տարբերակով ներկայացված հայտը Լիազորված մարմնի կողմից մուտքագրվելուց հետո.

1) եթե հայտի ուսումնասիրության ընթացքում պարզվում է, որ հայտը կամ դրան կից ներկայացված փաստաթղթերի պատճենները անընթեռնելի կամ թերի են, ապա Լիազորված մարմինը հայտը մուտքագրվելուց հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնում է օտարերկրյա օդանավ շահագործողին՝ առաջարկելով 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում լրացնել թերի (բացակայող) փաստաթղթերը:

Թերությունները չվերացնելու դեպքում հայտի ընդունումը մերժվում է, որի մասին հայտատուն գրավոր տեղեկացվում է՝ սահմանված 3 (երեք) աշխատանքային օրվա ավարտից հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում.

2) եթե թղթային տարբերակով ներկայացված հայտն ամբողջական է, ապա Լիազորված մարմնի կողմից մուտքագրված Հայտը մուտքագրվելուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրման նպատակով ներկայացվում է Լիազորված մարմնի համապատասխան ստորաբաժանումներին:

19. Կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն տալու կամ մերժելու մասին հրամանի օրինակը թույլտվության (Ձև N 2) (տեսաներածված պատճենի) հետ միասին, իսկ հայտի մերժման դեպքում՝ մերժման մասին Լիազորված մարմնի ղեկավարի հրամանի օրինակը (օրինակի տեսաներածված պատճենը) արձակման պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում վերբեռնվում է կայքէջում օտարերկրյա օդանավ շահագործողի համար բացված անձնական տիրույթում, իսկ թղթային տարբերակով հայտի ներկայացման դեպքում՝ Հրամանի օրինակը թույլտվության (Ձև N 2) (տեսաներածված պատճենի) հետ միասին, իսկ հայտի մերժման դեպքում՝ մերժման մասին Լիազորված մարմնի ղեկավարի հրամանի օրինակը (օրինակի տեսաներածված պատճենը) արձակման օրվանից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է (առձեռն կամ փոստով) օտարերկրյա օդանավ շահագործողին:

Մերժման մասին հրամանում նշվում են մերժման իրավական հիմքերը: Հայտը չի կարող մերժվել աննպատակահարմարության պատճառաբանությամբ:

20. Լիազորված մարմինը թույլտվության տրման պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում թույլտվության մասին հեռագրային կապի միջոցով տեղեկացնում է Հայաստանի Հանրապետությունում նպատակակետ հանդիսացող օդանավակայանին և օդանավակայանային վերգետնյա ծառայություններ մատուցող կազմակերպություններին:

21. Հայտը մերժվում է, եթե սույն կարգի 9-րդ կետով նախատեսված փաստաթղթերը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված պահանջներին:

22. Թղթային տարբերակով ներկայացված հայտով տրամադրված թույլտվության կորստի կամ վնասման դեպքում Լիազորված մարմինը թույլտվություն ստացած անձին տրամադրվում է դրա կրկնօրինակը՝

համապատասխան դիմումը Լիազորված մարմնի կողմից մուտքագրվելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Թույլտվության կրկնօրինակի վերին աջ անկյունում կատարվում է «Կրկնօրինակ» նշագրումը:

IV. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

23. Օդային հաղորդակցությունների իրականացման համար նախատեսված օդանավի տիպի և հաճախականության փոփոխությունների դեպքում օտարերկրյա օդանավ շահագործողը համապատասխան փոփոխությունները հավաստող փաստաթղթերը (այսուհետ՝ Փաստաթղթեր) վերբեռնում է e-gov.am էլեկտրոնային կառավարման համակարգի համապատասխան բաժին կամ թղթային (առձեռն կամ փոստով) տարբերակով ներկայացնում է Լիազորված մարմին՝ նախատեսվող օդային հաղորդակցության իրականացման օրվանից առնվազն 6 (վեց) աշխատանքային օր առաջ:

24. Էլեկտրոնային տարբերակով ներկայացվելուց անմիջապես հետո Փաստաթղթերը ավտոմատացված էլեկտրոնային համակարգի միջոցով փոխանցվում են Լիազորված մարմնի համակարգին:

25. Էլեկտրոնային եղանակով Փաստաթղթերը համարվում են ներկայացված՝ դրանք Լիազորված մարմինի համակարգին փոխանցվելու, իսկ ոչ աշխատանքային օրերին կամ աշխատանքային օրերի՝ ոչ աշխատանքային ժամերին Լիազորված մարմինի համակարգին փոխանցվելու դեպքում՝ հայտը ներկայացված է համարվում կայքէջի հայտերը ներկայացնելու էլեկտրոնային համակարգում հայտը մուտքագրվելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 09:00-ին:

26. Թղթային տարբերակով Փաստաթղթերը ներկայացնելու դեպքում՝ դրանք համարվում են ներկայացված Լիազորված մարմնի կողմից մուտքագրվելու պահից:

27. Էլեկտրոնային կամ թղթային տարբերակով Փաստաթղթերը ստանալուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում դրանք ուսումնասիրման նպատակով ներկայացվում են Լիազորված մարմնի համապատասխան ստորաբաժանումներին:

28. Թույլտվության մեջ փոփոխություն կատարելու մասին Հրամանի օրինակը (տեսաներածված պատճենի) հետ միասին, իսկ թույլտվության մեջ փոփոխության կատարումը մերժելու դեպքում՝ մերժման մասին Լիազորված մարմնի ղեկավարի հրամանի օրինակը (օրինակի տեսաներածված պատճենը) արձակման պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում Փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակով ներկայացման դեպքում՝ վերբեռնվում է կայքէջում

օտարերկրյա օդանավ շահագործողի համար բացված անձնական տիրույթում, իսկ Փաստաթղթերի թղթային տարբերակով ներկայացման դեպքում՝ ուղարկվում է (առձեռն կամ փոստով) օտարերկրյա օդանավ շահագործողին: Մերժման մասին հրամանում նշվում են մերժման իրավական հիմքերը:

29. Լիազորված մարմինը թույլտվության տրման պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում փոփոխությունների մասին հեռագրային կապի միջոցով տեղեկացնում է Հայաստանի Հանրապետությունում նպատակակետ հանդիսացող օդանավակայանին և օդանավակայանային վերգետնյա ծառայություններ մատուցող կազմակերպություններին:

30. Օդանավի վկայականներում, օդանավ շահագործողի վկայականում կամ օդանավ շահագործողի վկայականին կից հավելվածներում կամ հատուկ դրույթներում փոփոխությունների դեպքում՝ օտարերկրյա օդանավ շահագործողը համապատասխան փոփոխությունները հավաստող փաստաթղթերը (այսուհետ՝ Փաստաթղթեր) էլեկտրոնային տարբերակով վերբեռնում է e-gov էլեկտրոնային կառավարման համակարգի «Օդային հաղորդակցություն» բաժնում բացված անձնական տիրույթում կամ թղթային տարբերակով ներկայացնում է Լիազորված մարմին՝ նախատեսվող օդային հաղորդակցության իրականացման օրվանից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ: Նույն եղանակով օտարերկրյա օդանավ շահագործողը այդ մասին ծանուցում է չվերթի համարի փոփոխության դեպքում:

31. Լիազորված մարմինը Փաստաթղթերի վերաբերյալ դրական եզրակացության դեպքում այդ մասին հեռագրային կապի միջոցով տեղեկացնում է Հայաստանի Հանրապետությունում նպատակակետ հանդիսացող օդանավակայանին և օդանավակայանային վերգետնյա ծառայություններ մատուցող կազմակերպություններին: Փաստաթղթերի վերաբերյալ բացասական եզրակացության դեպքում՝ Լիազորված մարմինը տեղեկացնում է (առցանց կամ գրավոր) օդանավ շահագործողին՝ դիմումի ստացման օրվանից հետո 6-րդ աշխատանքային օրը:

V. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

32. Թույլտվության գործողությունը կասեցվում է հետևյալ դեպքերում.

1) Եթե թույլտվությամբ նախատեսված գործունեությունն իրականացվել է տվյալ գործունեությունը կանոնակարգող ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի խախտումներով,

2) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ժամկետներում պետական տուրքի գանձման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցման պարտավորությունները չկատարելու դեպքում,

3) թույլտվություն կրող օտարերկրյա օդանավ շահագործողների օդանավերի տեսչական ստուգումների արդյունքում հայտնաբերված թռիչքների անվտանգության թերությունների առկայության դեպքում, որոնց համար :

33. Թույլտվության գործողությունը կասեցվում է մինչև հայտնաբերված խախտումների վերացումը կամ մանրամասն ուսումնասիրությունների անցկացումը,

34. Թույլտվության գործողությունը կասեցվում է Լիազորված մարմնի ղեկավարի հրամանով: Լիազորված մարմնի ղեկավարի հրամանում նշվում են կասեցման իրավական հիմքերը: Լիազորված մարմնի ղեկավարի հրամանը արձակման պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում վերբեռնվում է օտարերկրյա օդանավ շահագործողների համար e-gov էլեկտրոնային կառավարման համակարգի «Օդային հաղորդակցություն» բաժնում օտարերկրյա օդանավ շահագործողների համար բացված անձնական տիրույթում կամ տրամադրվում է գրավոր ծանուցմամբ:

35. Թույլտվության գործողությունը վերսկսվում է Լիազորված մարմնի ղեկավարի համապատասխան հրամանով, երբ օդանավ շահագործողը վերացրել է կասեցման համար հիմք հանդիսացած պատճառները և e-gov էլեկտրոնային կառավարման համակարգի «Օդային հաղորդակցություն» բաժնում իր համար բացված անձնական տիրույթում վերբեռնել է կասեցման համար հիմք հանդիսացած պատճառների վերացման մասին գրության և համապատասխան հիմքերի տեսաներածված պատճեները կամ դրանք ներկայացրել է Լիազորված մարմին թղթային տարբերակով:

36. Թույլտվության վերսկսման մասին Լիազորված մարմնի ղեկավարի հրամանի օրինակը արձակման պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում վերբեռնվում է օտարերկրյա օդանավ շահագործողների համար e-gov էլեկտրոնային կառավարման համակարգի «Օդային հաղորդակցություն» բաժնում բացված անձնական տիրույթում կամ գրավոր ծանուցմամբ տրամադրվում է օդանավ շահագործողին:

37. Եթե խախտումների վերացման համար տրված ժամկետում կամ ուսումնասիրության անցկացման արդյունքում խախտումները չեն վերացվել, ապա Լիազորված մարմնի կողմից թույլտվության գործողությունը այդ մարմնի ղեկավարի հրամանով դադարեցվում է:

38. Թույլտվության գործողության դադարեցման մասին Լիազորված մարմնի ղեկավարի հրամանը արձակման պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում վերբեռնվում է e-gov էլեկտրոնային կառավարման համակարգի «Օդային հաղորդակցություն» բաժնում օտարերկրյա օդանավ շահագործողների համար բացված անձնական տիրույթում կամ գրավոր ծանուցմամբ տրամադրվում է փոխադրողին:

VI. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

39. Օտարերկրյա օդանավ շահագործողները, թղթային տարբերակով հայտերը ներկայացնում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն

առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն ՝ «Զվարթնոց» օդանավակայան 0042, քաղաք Երևան:

40. Օտարերկրյա օդանավ շահագործողները, էլեկտրոնային տարբերակով հայտերը ներկայացնում են www.e-gov.am կայքէջի «Օդային հաղորդակցություն» բաժնում:

41. Օտարերկրյա օդանավ շահագործողները օդանավերի փոփոխության դեպքում՝ համապատասխան փաստաթղթերը ներկայացնում են թղթային տարբերակով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն, Զվարթնոց օդանավակայան 0042, քաղաք Երևան, կամ www.e-gov.am կայքէջի «Օդային հաղորդակցություն» բաժնում բացված անձնական տիրույթից էլեկտրոնային ծանուցում ուղարկելով, կամ cds@armats.am էլեկտրոնային հասցեով:

Ձև 1

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴԵՊԻ ՀՀ ՏԱՐԱԾՔ ԵՎ ՀՀ ՏԱՐԱԾՔԻՑ ԿԱՆՈՆԱՎՈՐ/ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՉՎԵՐԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՅՏ

REQUEST FOR APPROVAL OF FOREIGN AIR OPERATOR'S SCHEDULED AND TWO AND MORE NON-SCHEDULED FLIGHTS TO/FROM ARMENIA

ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ (պետությունը): _____
NAME OF OPERATOR (state):_____

Կոնտակտային անձի անուն: Contact Person Name:		
Փոստային հասցե: Mailing Address:		
Հեռախոս: Telephone:	Ֆաքս: Fax:	Էլ-Փոստի հասցե: Email Address:
ԻԿԱՕ/ԻԱՏԱ կոդ: ICAO/IATA code:		
ԱՖՏՆ: AFTN:		

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ:
_____
NAME OF ARMENIAN REPRESENTATIVE:
_____

Կոնտակտային անձի անուն: Contact Person Name:		
Փոստային հասցե: Mailing Address:		
Հեռախոս: Telephone:	Ֆաքս: Fax:	Էլ-Փոստի հասցե: Email Address:

ՀՀ օդանավակայաններում տեխնիկական սպասարկման (ապահովման) մասին տեղեկություն (պայմանագիր կամ այլ համապատասխան փաստաթուղթ)
Information (agreement or other applicable document) about technical assistance (maintenance) at Armenian airports

ՎԵՐԳԵՏՆՅԱ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԳՈՐԾԱԿԱԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ: _____

NAME OF GROUND HANDLING AGENT: _____

Փոստային հասցե: Mailing Address:		
Հեռախոս: Telephone:	Ֆաքս: Fax:	Էլ-Փոստի հասցե: Email Address:

ՉՎԵՐԹԻ(ՆԵՐԻ) ՏԵՍԱԿԸ - Նշել համապատասխան վանդակներում.
DETAILS OF FLIGHT(S) - Please tick as appropriate.

1) ՈՒՂԵՎՈՐԱՅԻՆ/PASSENGER: ☐ ԲԵՌՆԱՅԻՆ/ CARGO: ☐
2) ԿԱՆՈՆԱՎՈՐ/SCHEDULED: ☐ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ/ NON-SCHEDULED: ☐
3) ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ԱՆՈՒՆԸ (առկայության դեպքում): _____

NAME OF CHARTERER (If applicable): _____

Փոստային հասցե: Mailing Address:		
Հեռախոս: Telephone:	Ֆաքս: Fax:	Էլ-Փոստի հասցե: Email Address:

4) Օդանավ շահագործողի ընկերությունում օտարերկրյա կապիտալի առկայության և բաժնեմասի մասին տեղեկություն
Information about the presence and share of the foreign capital at the aircraft operator's company

5) ՉՎԵՐԹԻ(ՆԵՐԻ) ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ
FLIGHT(S) DETAILS

Չվերթի համար Flight No.	Շահագործման օրեր Operation Days	Երթուղին/ Հատվածները Routing/Sectors	ԺԱՄԱՆՈՒՄ /ՄԵԿՆՈՒՄ ETA/ETD	Չվերթների թիվը Ամսաթիվ/ Շահագործման ժամկետը Number of Flights Date/Period of Ops	Նշումներ Remarks

Հայտին ընթացք կտրվի միայն պահանջվող բոլոր փաստաթղթերի և տեղեկատվության ներկայացման դեպքում:
The application will only be processed when all the required documents and information are submitted.

ՀՀ ավիացիոն իշխանությունը իրավունք ունի պահանջել հավելյալ տեղեկատվություն հայտը ամբողջականացնելու նպատակով:
The Aviation Authority of the RA reserves the right to request additional information to substantiate the application.

6 ՊԱՀԱՆՋՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ: Անհրաժեշտության դեպքում կցել լրացուցիչ էջեր: REQUIRED INFORMATION: Attach supplementary sheets if necessary.	
6.1 Արդյոք շահագործողը առաջին անգամ է դիմում դեպի ՀՀ առևտրային օդային փոխադրումներ իրականացնումու նպատակով: Is the operator applying to operate commercial flight into Armenia for the first time?	Այո / Yes Ոչ / No Եթե "Ոչ", նշել դեպի ՀՀ իրականացրած վերջին առևտրային օդային փոխադրման ամսաթիվը: _____ If "No", please indicate the date of the last previous commercial flight into Armenia: _____
6.2 Շահագործողի պետությունը (եթե տարբերվում է գրանցման պետությունից) State of Operator (if different from State of Registry)	
6.3 Արդյոք օդանավը/օդանավերը հանդիսանում են ԻԿԱՕ-ի 83 ԲԻՍ համաձայնագրի կարգավորման առարկա Is/are the aircraft the subject of an ICAO 83bis agreement	Այո/ Yes Ոչ / No
6.4 Արդյոք չվերթը իրականացվելու է ՀՀ և շահագործողի պետության միջև: Are the intended routes between Armenia and the State of the Operator?	Այո/ Yes Ոչ / No

7 Դեպի ՀՀ և ՀՀ-ից երթուղիներում շահագործման ենթակա օդանավեր (Տիպերը, գրանցման նիշերը) Aircrafts to be operated on the routes to and from Armenia (Types, Registration marks)	

8 ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ: Շահագործողի կողմից ներկայացման ենթակա REQUIRED DOCUMENTATION: To be provided by the Operator		
	8.1 Օդանավ շահագործողի վկայական	Կցված է:

	Air Operators Certificate	Attached.
	8.2 Շահագործման հատուկ դրույթներ Associated Operations Specifications	Կցված է: Attached.
	8.3 Թռիչքային պիտանիության վկայական/կամ Պիտանիության վերանայված վկայական (եթե առկա է) Certificate of Airworthiness and/or Airworthiness Review Certificate (if any)	Կցված է յուրաքանչյուր օդանավի համար: Attached for each aircraft
	8.4 Գրանցման վկայական Certificate of Registration	Կցված է յուրաքանչյուր օդանավի համար: Attached for each aircraft
	8.5 Աղմուկի վկայական կամ համապատասխան այլ փաստաթուղթ: Noise Certificate or equivalent document	Կցված է յուրաքանչյուր օդանավի համար: Attached for each aircraft or type
	Ապահովագրության վկայական (ուղևորների, ուղեբեռի, բեռի, երրորդ անձանց) Certificate of insurance (passenger, baggage, cargo, third party)	Կցված է: Attached
	8.7 Շահագործողի ավիացիոն անվտանգության ծրագիրը Air Operators aviation security programme	Կցված է Attached

ՆՇՈՒՄՆԵՐ
NOTES

3. Եթե շահագործվող օդանավի գրանցման պետությունը և շահագործողի պետությունը տարբեր են, շահագործողները պետք է ներկայացնեն համապատասխան գրություն (անգլերենով) այն մասին, թե ով է իրականացնում օդանավի շահագործման և պիտանիության նկատմամբ վերահսկողությունը, այս պարագայում կիրառելի է նաև պետությունների միջև ԻԿԱՕ-ի 83 ԲԻՍ համաձայնագիրը:

Where the State of Registration of the aircraft operated and the State of the Operator are different, Operators are to provide a letter, in English, stating who has the Operational & Airworthiness control of the aircraft; this may be covered by an ICAO 83bis arrangement between States.

4. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ

Եթե օդանավ շահագործողը իրականացնում է օդային հաղորդակցություններ համագործակցային համաձայնագրերի ներքո՝ որպես շահագործող ընկերություն, բոլոր մարքեթինգային ընկերությունները պետք է նշվեն:

CODE SHARE ARRANGEMENTS

In case the air carrier operates flights on code share basis as an operating partner, all marketing partners have to be indicated.

10 Հայտատուի հայտարարությունը և պայմանների ու պահանջների ընդունման հաստատումը: Applicant's declaration and acceptance of Conditions and Requirements
Հայտարարում եմ, որ ունեմ սույն հայտը ավիացիոն իշխանությանը ներկայացնելու լիազորություն և, որ սույն հայտում նշված բոլոր տեղեկությունները և ներկայացված փաստաթղթերը ճշգրիտ են և ամբողջական: Ոչ ամբողջական տեղեկատվությունը կարող է հանգեցնել ուշացումների կամ հայտի մերժման: Վերոնշյալ տեղեկություններում/փաստաթղթերում յուրաքանչյուր փոփոխության, փաստաթղթերը ուժը կորցնելու դեպքում՝ Ավիացին իշխանությունը այդ մասին կտեղեկացվի հնգօրյա ժամկետում: Համաձայն ՀՀ օրենսդրության՝ խախտում է համարվում մոլորեցնելու մտադրությամբ ցանկացած կեղծ փաստաթղթի ներկայացումը՝ թույլտվության տրմանը, երկարացմանը կամ փոփոխությանը նպաստելու նպատակով: Ես հաստատում եմ, որ ես կարդացել և հասկացել եմ սույն հայտում ներառված բոլոր հարցերը և դրույթները: Իմ ներկայացրած պատասխանները ճիշտ են՝ իմ իմացությամբ: I declare that I have the legal capacity to submit this application to the Aviation Authority and that all information and documents provided in this application form are true and complete. Incomplete information may result in delay or rejection of the application. In case of any changes in the above information/documentation, termination of submitted documentation the Aviation Authority will be informed in writing within 5 business days. It is an offence under the legislation of the RA to make, with intent to deceive, any false representation for the purpose of procuring the grant, issue, renewal or variation of permission. I certify that I have read and understood all the questions and statements on this form. The answers I have furnished are true and correct to the best of my knowledge and belief.

Շահագործողի անվանումը Name of Operator	Շահագործողի կոնտակտային անձի անունը և նշանակումը Name of Operator's contact Person & designation	Ստորագրություն/Ամսաթիվ Signature / Date

ՊԱՅՄԱՆՆԵՐ
CONDITIONS

1) Ամբողջ տեղեկատվությունը և փաստաթղթերը պետք է ներկայացված լինեն անգլերեն կամ անգլերեն թարգմանությամբ, կամ ռուսերեն:
All information and documents submitted must be in English or with an English translation or in Russian;

2) Օդանավում գտնվող օդանավ շահագործողի վկայականը, գրանցման վկայականը, թռիչքային պիտանիության վկայականը և նմանատիպ այլ փաստաթղթերը պետք է լինեն վավեր և բոլոր պայմանները, որոնց հիման վրա այդ վկայականները տրվել կամ վավեր են ճանաչվել պետք է պահպանվեն:
Documents such as Air Operator's Certificate (AOC), Certificate of Registration (CoR, Certificate of Airworthiness (CoA) and etc. carried on board the aircraft must be valid at all times, and Any conditions subject to which these certificates were issued or rendered valid must be complied with.

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ:
INSTRUCTIONS

1.1 Լրացնել ընկերության հիմնադրման համապատասխան վկայականում առկա ընկերության ամբողջական անվանումը: Առկայության դեպքում լրացնել նաև ֆիրմային անվանումը, բիզնեսը փաստացի շահագործողի անվանումը և գրանցման համարը:
Please enter the full name of the company as it appears on the Article/Certificate of incorporation of the company. If applicable also enter the Trade Name, Doing-business-as and the Company registration number. In case the applicant is not a company but a natural person, please enter the full name as it appears in your ID Card/Passport.
1.2 Խնդրում ենք լրացնել ընկերության հիմնադրման համապատասխան վկայականում առկա ընկերության գրանցված գրասենյակի հասցեն: Եթե հայտատուն ֆիզիկական անձ է, լրացնել գրանցման հասցեն:
Please enter the address of the registered office as it appears on the Article/Certificate of incorporation of the company. In the case when the applicant is not a company but natural person, please enter the address at which you are registered.

2. Հայտը պետք է լրացվի 10-րդ բաժնում նշված անձի կողմից: Շահագործման և տեխնիկական սպասարկման հետ կապված հարցերը ուղղվելու են այդ անձին:
The application should be completed by the person indicated in Section 10. Queries related to operational and maintenance matters will be referred to this person.

Ձև N 2

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 000/20 ____
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 000/20 ____
TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR SCHEDULED AIR SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA

Օդանավ շահագործողը
Aircraft Operator
Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը)
Type(s) of aircraft(s)
Հաճախականությունը
Frequency
Երթուղին
Air route
Թույլտվության գործողության ժամկետը
Permission validity ___ _____20__

_____

(պաշտոնը, անունը, ազգանունը) (ստորագրություն) _____ _____ ____
(position title, name, surname) (signature) (տալու ամսաթիվը)
Կ.Տ. (date of issue)»:
Seal »:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2016 թվականի
դեկտեմբերի 29-ի N 1378 - Ն որոշման

«Հավելված N 2
ՀՀ կառավարության 2015 թվականի
օգոստոսի 6-ի N 1005 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են օտարերկրյա օդանավ շահագործողների կողմից Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս երկու և ավելի ոչ կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություններ (այսուհետ՝ թույլտվություն) տալու, դրանց տրամադրման, մերժման, գործողության կասեցման և դադարեցման հետ կապված հարաբերությունները:

2. Օտարերկրյա օդանավ շահագործողի կողմից Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կարող են իրականացվել երկու և ավելի ոչ կանոնավոր առևտրային օդային հաղորդակցություններ՝ հիմք ընդունելով Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության ու Հայաստանի Հանրապետության անդամակցած միջազգային այլ կազմակերպությունների կողմից հրապարակված միջազգային ստանդարտները և առաջարկվող գործելաձևերը:

3. Ելնելով օդային փոխադրումների ծավալների, հաճախականությունների ավելացման և պակասեցման անհրաժեշտությունից՝ օտարերկրյա օդանավ շահագործողի կողմից ներկայացված հայտի հիման վրա կատարվում է թույլտվության փոփոխություն՝ սույն կարգի IV գլխի դրույթներով նախատեսված ընթացակարգերով:

II. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

4. Թույլտվություն ստանալու համար օտարերկրյա օդանավ շահագործողները հայտը (այսուհետ՝ հայտ) և դրան կից փաստաթղթերը առցանց կարող են ներկայացնել սույն կարգով սահմանված կանոններով էլեկտրոնային կառավարման համակարգի (www.e-gov.am կայքէջ) «Լիցենզիաների ստացման հայտերի ընդունման համակարգ»-ի «Օդային հաղորդակցություն» բաժնում:

Օտարերկրյա օդանավ շահագործողները կարող են հայտ ներկայացնել նաև թղթային (առձեռն կամ փոստով) տարբերակով:

5. Առցանց հայտ ներկայացնելու համար, հայտատուն նախապես գրանցվում է «Օդային հաղորդակցություն» բաժնում և ստանում է համակարգում բացված անձնական տիրույթ մուտք գործելու և առցանց հայտեր ներկայացնելու համար անհրաժեշտ վավերապայմաններ:

6. «Օդային հաղորդակցություն» բաժնի համապատասխան ծրագրային տիրույթում գրանցված օտարերկրյա օդանավ շահագործողի կողմից նախատեսվող օդային հաղորդակցության իրականացման օրվանից առնվազն 15 (տասնհինգ) աշխատանքային օր առաջ հայտ ներկայացնելու նպատակով գրանցված անձի համար բացված անձնական տիրույթից լրացվում է կայքէջում տեղադրված համապատասխան հայտի էլեկտրոնային ձևաթուղթը՝ համաձայն սույն կարգի Ձև N 1-ի: Հայտի էլեկտրոնային ձևաթուղթը լրացվելուց և հայտատուի էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվելուց հետո՝ հաստատված հայտի ֆայլը մուտքագրվում (վերբեռնվում) է կայքէջի դիմումները ներկայացնելու էլեկտրոնային համակարգ:

7. Հայտին կից վերբեռնվում են հետևյալ փաստաթղթերի տեսաներածված պատճենները (թղթային տարբերակով հայտ ներկայացնելու դեպքում՝ պատճենները).

1) օդանավ շահագործողի վկայականը՝ կից հավելվածներով կամ հատուկ դրույթներով.

2) օտարերկրյա օդանավ շահագործողի ավիացիոն անվտանգության ծրագիրը.

3) հայտում նշված օդային հաղորդակցության իրականացման համար նախատեսված օդանավի թռիչքային պիտանիության, պետական գրանցման և աղմուկի վկայականները.

4) օդային հաղորդակցության իրականացման համար նախատեսված, ուղևորների, ուղեբեռների, բեռների և երրորդ անձանց հանդեպ պատասխանատվության ապահովագրության և (կամ) վերաապահովագրության վկայականները (սերտիֆիկատները).

5) այլ տեղեկություններ, որոնք, ըստ օտարերկրյա օդանավ շահագործողի, վերաբերելի են և կարող են նպաստել օդային ուղու շահագործման թույլտվություն ստանալու գործընթացին:

8. Էլեկտրոնային տարբերակով ներկայացված հայտին կից, սույն կարգի պահանջներին համապատասխան ներկայացնելու ենթակա փաստաթղթերի բնօրինակների տեսաներածված պատճենները ներկայացվում են հետևյալ ձևաչափով.

1) փաստաթղթերի տեսաներածված պատճենները պետք է ներկայացվեն PDF կամ JPEG ֆորմատի ֆայլերով.

2) փաստաթղթերի բնօրինակները պետք է տեսաներածված լինեն գունավոր՝ առնվազն 300 ՀՏՎ (DPI) խտությամբ, այնպես, որպեսզի փաստաթղթի տեսաներածված պատճենի ֆայլը պարունակի բնօրինակ փաստաթուղթն ամբողջությամբ:

9.Օտարերկրյա օդանավ շահագործողները թղթային տարբերակով հայտը ներկայացնում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն (այսուհետ՝ Լիազորված մարմին):

10. Թղթային տարբերակով հայտ ներկայացնելու դեպքում օտարերկրյա օդանավ շահագործողները ներկայացնում են e-gov էլեկտրոնային կառավարման համակարգի «Օդային հաղորդակցություն» բաժնում ներբեռնված հայտը՝ համաձայն սույն կարգի Ձև N 1-ի և հայտին կից տեղեկություններն ու փաստաթղթերի պատճենները՝ համաձայն սույն կարգի 7-րդ և 8-րդ կետերի պահանջների:

11. Թղթային տարբերակով ներկայացվող հայտին կցվող փաստաթղթերի պատճենները հաստատվում են օտարերկրյա օդանավ շահագործողի լիազորված անձի կողմից՝ ստորագրությամբ:

12. Էլեկտրոնային տարբերակով ներկայացվելուց անմիջապես հետո հայտը և կից փաստաթղթերը ավտոմատացված էլեկտրոնային համակարգի միջոցով փոխանցվում են Լիազորված մարմնի համակարգին:

13. Էլեկտրոնային եղանակով ներկայացված հայտը համարվում է ընդունված՝ e-gov էլեկտրոնային կառավարման համակարգից Լիազորված մարմնի համակարգին փոխանցվելու պահից, իսկ ոչ աշխատանքային օրերին կամ աշխատանքային օրերի՝ ոչ աշխատանքային ժամերին, հայտը Լիազորված մարմնի համակարգին փոխանցվելու դեպքում՝ այն ներկայացված է համարվում հայտը e-gov էլեկտրոնային կառավարման համակարգի «Օդային հաղորդակցություն» բաժնում մուտքագրվելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 09:00-ին: Դիմումի մուտքագրված լինելու փաստը հավաստվում է հետադարձ ծանուցմամբ, որը պարունակում է 12-նիշանոց ծածկագիր: Հայտատուն դիմումի ընթացքին կարող է հետևել նշված 12-նիշանոց ծածկագրով համակարգ մուտք գործելու միջոցով: Հայտը թղթային տարբերակով ներկայացնելու դեպքում՝ այն ներկայացված է համարվում Լիազորված մարմնի կողմից մուտքագրվելու պահից:

14. Սույն կարգի 9-րդ կետով նախատեսված դեպքում՝ հայտը ներկայացված է համարվում Լիազորված մարմնի կողմից մուտքագրվելու պահից:

15. Անհրաժեշտության դեպքում՝ Լիազորված մարմինը կարող է դիմել օտարերկրյա օդանավ շահագործողի գրանցման պետության ավիացիոն իշխանություններին՝ ներկայացված փաստաթղթերի վավերականությունը պարզելու և այլ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար:

III. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼԸ ԿԱՄ ՄԵՐԺԵԼԸ

16. Սույն կարգով սահմանված եղանակներով էլեկտրոնային տարբերակով ներկայացված հայտը Լիազորված մարմինի համակարգին փոխանցվելուց հետո.

1) եթե հայտի ուսումնասիրության ընթացքում պարզվում է, որ հայտը կամ դրան կից ներկայացված փաստաթղթերի տեսաներածված պատճենները չեն համապատասխանում սույն կարգի 8-րդ կետով սահմանված պահանջներին, կամ թերի են, ապա Լիազորված մարմինը հայտը իր համակարգին փոխանցվելուց հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին առցանց տեղեկացնում է օտարերկրյա օդանավ շահագործողին՝ առաջարկելով 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում վերբեռնել թերի (բացակայող) փաստաթղթերը:

Թերությունները չվերացնելու դեպքում հայտի ընդունումը մերժվում է, որի մասին հայտատուն առցանց տեղեկանում է իր համար բացված անձնական տիրույթում՝ սահմանված 3 (երեք) աշխատանքային օրվա ավարտից հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում.

2) եթե էլեկտրոնային տարբերակով ներկայացված հայտն ամբողջական է, ապա Լիազորված մարմնի կողմից մուտքագրված Հայտը Լիազորված մարմնի համակարգին փոխանցվելուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրման նպատակով ներկայացվում է Լիազորված մարմնի համապատասխան ստորաբաժանումներին:

17. Սույն կարգով սահմանված եղանակներով թղթային տարբերակով ներկայացված հայտը Լիազորված մարմնի կողմից մուտքագրվելուց հետո.

1) եթե հայտի ուսումնասիրության ընթացքում պարզվում է, որ հայտը կամ դրան կից ներկայացված փաստաթղթերի պատճենները անընթեռնելի կամ թերի են, ապա Լիազորված մարմինը հայտը մուտքագրվելուց հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնում է օտարերկրյա օդանավ շահագործողին՝ առաջարկելով 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում լրացնել թերի (բացակայող) փաստաթղթերը:

Թերությունները չվերացնելու դեպքում հայտի ընդունումը մերժվում է, որի մասին հայտատուն գրավոր տեղեկացվում է՝ սահմանված 3 (երեք)

աշխատանքային օրվա ավարտից հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում.

2) եթե թղթային տարբերակով ներկայացված հայտն ամբողջական է, ապա Լիազորված մարմնի կողմից մուտքագրված Հայտը մուտքագրվելուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրման նպատակով ներկայացվում է Լիազորված մարմնի համապատասխան ստորաբաժանումներին:

18. Երկու և ավելի ոչ կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն տալու կամ մերժելու մասին հրամանի օրինակը թույլտվության (Ձև N 2) (տեսաներածված պատճենի) հետ միասին, իսկ հայտի մերժման դեպքում՝ մերժման մասին Լիազորված մարմնի ղեկավարի հրամանի օրինակը (օրինակի տեսաներածված պատճենը) արձակման պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում վերբեռնվում է կայքէջում օտարերկրյա օդանավ շահագործողի համար բացված անձնական տիրույթում, իսկ թղթային տարբերակով հայտի ներկայացման դեպքում՝ Հրամանի օրինակը թույլտվության (Ձև N 2) (տեսաներածված պատճենի) հետ միասին, իսկ հայտի մերժման դեպքում՝ մերժման մասին Լիազորված մարմնի ղեկավարի հրամանի օրինակը (օրինակի տեսաներածված պատճենը) արձակման պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է (առձեռն կամ փոստով) օտարերկրյա օդանավ շահագործողին:

Մերժման մասին հրամանում նշվում են մերժման իրավական հիմքերը: Հայտը չի կարող մերժվել աննպատակահարմարության պատճառաբանությամբ:

19. Լիազորված մարմինը թույլտվության տրման պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում թույլտվության մասին հեռագրային կապի միջոցով տեղեկացնում է Հայաստանի Հանրապետությունում նպատակակետ հանդիսացող օդանավակայանին և օդանավակայանային վերգետնյա ծառայություններ մատուցող կազմակերպություններին:

20. Հայտը մերժվում է, եթե սույն կարգի 7-րդ կետով նախատեսված փաստաթղթերը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված պահանջներին:

21. Սույն գլխում նշված հայտերի քննության և եզրակացության տրամադրման գործընթացում հիմք են ընդունվում հայտի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին, իսկ դրանց բացակայության դեպքում՝ միջազգային օդային հաղորդակցությունները կարգավորող նորմատիվ ակտերի դրույթներին:

22. Թղթային տարբերակով ներկայացված հայտով տրամադրված թույլտվության կորստի կամ վնասման դեպքում Լիազորված մարմինը թույլտվություն ստացած անձին տրամադրվում է դրա կրկնօրինակը՝ համապատասխան դիմումը Լիազորված մարմնի կողմից մուտքագրվելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Թույլտվության կրկնօրինակի վերին աջ անկյունում կատարվում է «Կրկնօրինակ» նշագրումը:

IV. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

23. Օդային հաղորդակցությունների իրականացման համար նախատեսված օդանավի տիպի և հաճախականության փոփոխությունների դեպքում օտարերկրյա օդանավ շահագործողը համապատասխան փոփոխությունները հավաստող փաստաթղթերը (այսուհետ՝ Փաստաթղթեր) վերբեռնում է e-gov էլեկտրոնային կառավարման համակարգի համապատասխան բաժին կամ թղթային (առձեռն կամ փոստով) տարբերակով ներկայացնում է Լիազորված մարմին՝ նախատեսվող օդային հաղորդակցության իրականացման օրվանից առնվազն 6 (վեց) աշխատանքային օր առաջ:

24. Էլեկտրոնային տարբերակով ներկայացվելուց անմիջապես հետո Փաստաթղթերը ավտոմատացված էլեկտրոնային համակարգի միջոցով փոխանցվում են Լիազորված մարմնի համակարգին:

25. Էլեկտրոնային եղանակով Փաստաթղթերը համարվում են ներկայացված՝ դրանք Լիազորված մարմինի համակարգին փոխանցվելու, իսկ ոչ աշխատանքային օրերին կամ աշխատանքային օրերի՝ ոչ աշխատանքային ժամերին Լիազորված մարմինի համակարգին փոխանցվելու դեպքում՝ հայտը ներկայացված է համարվում կայքէջի հայտերը ներկայացնելու էլեկտրոնային համակարգում հայտը մուտքագրվելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 09:00-ին:

26. Թղթային տարբերակով Փաստաթղթերը ներկայացնելու դեպքում՝ դրանք համարվում են ներկայացված Լիազորված մարմնի կողմից մուտքագրվելու պահից:

27. Էլեկտրոնային կամ թղթային տարբերակով Փաստաթղթերը ստանալուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում դրանք ուսումնասիրման նպատակով ներկայացվում են Լիազորված մարմնի համապատասխան ստորաբաժանումներին:

28. Թույլտվության մեջ փոփոխություն կատարելու մասին Հրամանի օրինակը (տեսաներածված պատճենի) հետ միասին, իսկ թույլտվության մեջ փոփոխության կատարումը մերժելու դեպքում՝ մերժման մասին Լիազորված մարմնի ղեկավարի հրամանի օրինակը (օրինակի տեսաներածված պատճենը) արձակման պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում Փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակով ներկայացման դեպքում՝ վերբեռնվում է կայքէջում օտարերկրյա օդանավ շահագործողի համար բացված անձնական տիրույթում, իսկ Փաստաթղթերի թղթային տարբերակով ներկայացման դեպքում՝ ուղարկվում է (առձեռն կամ փոստով) օտարերկրյա օդանավ: Մերժման մասին հրամանում նշվում են մերժման իրավական հիմքերը:

29. Լիազորված մարմինը թույլտվության տրման պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում փոփոխությունների մասին հեռագրային

կապի միջոցով տեղեկացնում է Հայաստանի Հանրապետությունում նպատակակետ հանդիսացող օդանավակայանին և օդանավակայանային վերգետնյա ծառայություններ մատուցող կազմակերպություններին:

30. Օդանավի վկայականներում, օդանավ շահագործողի վկայականում կամ օդանավ շահագործողի վկայականին կից հավելվածներում կամ հատուկ դրույթներում փոփոխությունների դեպքում՝ օտարերկրյա օդանավ շահագործողը համապատասխան փոփոխությունները հավաստող փաստաթղթերը (այսուհետ՝ Փաստաթղթեր) էլեկտրոնային տարբերակով վերբեռնում է e-gov էլեկտրոնային կառավարման համակարգի «Օդային հաղորդակցություն» բաժնում բացված անձնական տիրույթում կամ թղթային տարբերակով ներկայացնում է Լիազորված մարմին՝ նախատեսվող օդային հաղորդակցության իրականացման օրվանից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ: Նույն եղանակով օտարերկրյա օդանավ շահագործողը այդ մասին ծանուցում է չվերթի համարի փոփոխության դեպքում:

31. Լիազորված մարմինը Փաստաթղթերի վերաբերյալ դրական եզրակացության դեպքում այդ մասին հեռագրային կապի միջոցով տեղեկացնում է Հայաստանի Հանրապետությունում նպատա¬կակետ հանդիսացող օդանավակայանին և օդանավակայանային վերգետնյա ծառայություններ մատուցող կազմակերպություններին: Փաստաթղթերի վերաբերյալ բացասական եզրակացության դեպքում՝ Լիազորված մարմինը տեղեկացնում է (առցանց կամ գրավոր) օդանավ շահագործողին՝ դիմումի ստացման օրվանից հետո 6-րդ աշխատանքային օրը:

V. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

32. Թույլտվության գործողությունը կասեցվում է հետևյալ դեպքերում.

1) Եթե թույլտվությամբ նախատեսված գործունեությունն իրականացվել է տվյալ գործունեությունը կանոնակարգող ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի խախտումներով,

2) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ժամկետներում պետական տուրքի գանձման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցման պարտավորությունները չկատարելու դեպքում,

3) թույլտվություն կրող օտարերկրյա օդանավ շահագործողների օդանավերի տեսչական ստուգումների արդյունքում հայտնաբերված թռիչքների անվտանգության թերությունների առկայության դեպքում:

33. Թույլտվության գործողությունը կասեցվում է մինչև հայտնաբերված խախտումների վերացումը կամ մանրամասն ուսումնասիրությունների անցկացումը,

34. Թույլտվության գործողությունը կասեցվում է Լիազորված մարմնի ղեկավարի հրամանով: Լիազորված մարմնի ղեկավարի հրամանում նշվում են կասեցման իրավական հիմքերը: Լիազորված մարմնի ղեկավարի հրամանը 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում վերբեռնվում է օտարերկրյա օդանավ շահագործողների համար e-gov էլեկտրոնային կառավարման համակարգի «Օդային հաղորդակցություն» բաժնում օտարերկրյա օդանավ շահագործողների համար բացված անձնական տիրույթում կամ տրամադրվում է գրավոր ծանուցմամբ:

35. Թույլտվության գործողությունը վերսկսվում է Լիազորված մարմնի ղեկավարի համապատասխան հրամանով, երբ օդանավ շահագործողը վերացրել է կասեցման համար հիմք հանդիսացած պատճառները և e-gov էլեկտրոնային կառավարման համակարգի «Օդային հաղորդակցություն» բաժնում իր համար բացված անձնական տիրույթում վերբեռնել է կասեցման համար հիմք հանդիսացած պատճառների վերացման մասին գրության և համապատասխան հիմքերի տեսաներածված պատճեները կամ դրանք ներկայացրել է Լիազորված մարմին թղթային տարբերակով:

36. Թույլտվության վերսկսման մասին Լիազորված մարմնի ղեկավարի հրամանի օրինակը 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում վերբեռնվում է օտարերկրյա օդանավ շահագործողների համար e-gov էլեկտրոնային կառավարման համակարգի «Օդային հաղորդակցություն» բաժնում բացված անձնական տիրույթում կամ գրավոր ծանուցմամբ տրամադրվում է օդանավ շահագործողին:

37. Եթե խախտումների վերացման համար տրված ժամկետում կամ ուսումնասիրության անցկացման արդյունքում խախտումները չեն վերացվել, ապա Լիազորված մարմնի կողմից թույլտվության գործողությունը այդ մարմնի ղեկավարի հրամանով դադարեցվում է:

38. Թույլտվության գործողության դադարեցման մասին Լիազորված մարմնի ղեկավարի հրամանը 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում վերբեռնվում է e-gov էլեկտրոնային կառավարման համակարգի «Օդային հաղորդակցություն» բաժնում օտարերկրյա օդանավ շահագործողների համար բացված անձնական տիրույթում կամ գրավոր ծանուցմամբ տրամադրվում է փոխադրողին:

VI. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

39. Օտարերկրյա օդանավ շահագործողները, թղթային տարբերակով հայտերը ներկայացնում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն՝ «Զվարթնոց» օդանավակայան 0042, քաղաք Երևան:

40. Օտարերկրյա օդանավ շահագործողները, էլեկտրոնային տարբերակով հայտերը ներկայացնում են www.e-gov.am կայքէջի «Օդային հաղորդակցություն» բաժնում:

41. Օտարերկրյա օդանավ շահագործողները օդանավերի փոփոխության դեպքում՝ համապատասխան փաստաթղթերը ներկայացնում են թղթային տարբերակով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն, Զվարթնոց օդանավակայան 0042, քաղաք Երևան, կամ www.e-gov.am կայքէջի «Օդային հաղորդակցություն» բաժնում բացված անձնական տիրույթից էլեկտրոնային ծանուցում ուղարկելով, կամ cds@armats.am էլեկտրոնային հասցեով:

Ձև 1

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴԵՊԻ ՀՀ ՏԱՐԱԾՔ ԵՎ ՀՀ ՏԱՐԱԾՔԻՑ ԿԱՆՈՆԱՎՈՐ/ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՉՎԵՐԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՅՏ

REQUEST FOR APPROVAL OF FOREIGN AIR OPERATOR'S SCHEDULED AND TWO AND MORE NON-SCHEDULED FLIGHTS TO/FROM ARMENIA

ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ (պետությունը): _____
NAME OF OPERATOR (state):_____

Կոնտակտային անձի անուն: Contact Person Name:		
Փոստային հասցե: Mailing Address:		
Հեռախոս: Telephone:	Ֆաքս: Fax:	Էլ-Փոստի հասցե: Email Address:
ԻԿԱՕ/ԻԱՏԱ կոդ: ICAO/IATA code:		
ԱՖՏՆ: AFTN:		

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ:
_____
NAME OF ARMENIAN REPRESENTATIVE:
_____

Կոնտակտային անձի անուն: Contact Person Name:		
Փոստային հասցե: Mailing Address:		
Հեռախոս: Telephone:	Ֆաքս: Fax:	Էլ-Փոստի հասցե: Email Address:

ՀՀ օդանավակայաններում տեխնիկական սպասարկման (ապահովման) մասին տեղեկություն (պայմանագիր կամ այլ համապատասխան փաստաթուղթ)
Information (agreement or other applicable document) about technical assistance (maintenance) at Armenian airports

ՎԵՐԳԵՏՆՅԱ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԳՈՐԾԱԿԱԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ: _____

NAME OF GROUND HANDLING AGENT: _____

Փոստային հասցե: Mailing Address:		
Հեռախոս: Telephone:	Ֆաքս: Fax:	Էլ-Փոստի հասցե: Email Address:

ՉՎԵՐԹԻ(ՆԵՐԻ) ՏԵՍԱԿԸ - Նշել համապատասխան վանդակներում.
DETAILS OF FLIGHT(S) - Please tick as appropriate.

1) ՈՒՂԵՎՈՐԱՅԻՆ/PASSENGER: ☐ ԲԵՌՆԱՅԻՆ/ CARGO: ☐
2) ԿԱՆՈՆԱՎՈՐ/SCHEDULED: ☐ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ/ NON-SCHEDULED: ☐
3) ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ԱՆՈՒՆԸ (առկայության դեպքում): _____

NAME OF CHARTERER (If applicable): _____

Փոստային հասցե: Mailing Address:		
Հեռախոս: Telephone:	Ֆաքս: Fax:	Էլ-Փոստի հասցե: Email Address:

4) Օդանավ շահագործողի ընկերությունում օտարերկրյա կապիտալի առկայության և բաժնեմասի մասին տեղեկություն
Information about the presence and share of the foreign capital at the aircraft operator's company

5) ՉՎԵՐԹԻ(ՆԵՐԻ) ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ
FLIGHT(S) DETAILS

Չվերթի համար Flight No.	Շահագործման օրեր Operation Days	Երթուղին/ Հատվածները Routing/Sectors	ԺԱՄԱՆՈՒՄ /ՄԵԿՆՈՒՄ ETA/ETD	Չվերթների թիվը Ամսաթիվ/ Շահագործման ժամկետը Number of Flights Date/Period of Ops	Նշումներ Remarks

Հայտին ընթացք կտրվի միայն պահանջվող բոլոր փաստաթղթերի և տեղեկատվության ներկայացման դեպքում:
The application will only be processed when all the required documents and information are submitted.

ՀՀ ավիացիոն իշխանությունը իրավունք ունի պահանջել հավելյալ տեղեկատվություն հայտը ամբողջականացնելու նպատակով:
The Aviation Authority of the RA reserves the right to request additional information to substantiate the application.

6 ՊԱՀԱՆՋՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ: Անհրաժեշտության դեպքում կցել լրացուցիչ էջեր: REQUIRED INFORMATION: Attach supplementary sheets if necessary.	
6.1 Արդյոք շահագործողը առաջին անգամ է դիմում դեպի ՀՀ առևտրային օդային փոխադրումներ իրականացնումու նպատակով: Is the operator applying to operate commercial flight into Armenia for the first time?	Այո / Yes Ոչ / No Եթե "Ոչ", նշել դեպի ՀՀ իրականացրած վերջին առևտրային օդային փոխադրման ամսաթիվը: _____ If "No", please indicate the date of the last previous commercial flight into Armenia: _____
6.2 Շահագործողի պետությունը (եթե տարբերվում է գրանցման պետությունից) State of Operator (if different from State of Registry)	
6.3 Արդյոք օդանավը/օդանավերը հանդիսանում են ԻԿԱՕ-ի 83 ԲԻՍ համաձայնագրի կարգավորման առարկա Is/are the aircraft the subject of an ICAO 83bis agreement	Այո/ Yes Ոչ / No
6.4 Արդյոք չվերթը իրականացվելու է ՀՀ և շահագործողի պետության միջև: Are the intended routes between Armenia and the State of the Operator?	Այո/ Yes Ոչ / No

7 Դեպի ՀՀ և ՀՀ-ից երթուղիներում շահագործման ենթակա օդանավեր (Տիպերը, գրանցման նիշերը) Aircrafts to be operated on the routes to and from Armenia (Types, Registration marks)	

8 ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ: Շահագործողի կողմից ներկայացման ենթակա REQUIRED DOCUMENTATION: To be provided by the Operator		
	8.1 Օդանավ շահագործողի վկայական	Կցված է:

	Air Operators Certificate	Attached.
	8.2 Շահագործման հատուկ դրույթներ Associated Operations Specifications	Կցված է: Attached.
	8.3 Թռիչքային պիտանիության վկայական/կամ Պիտանիության վերանայված վկայական (եթե առկա է) Certificate of Airworthiness and/or Airworthiness Review Certificate (if any)	Կցված է յուրաքանչյուր օդանավի համար: Attached for each aircraft
	8.4 Գրանցման վկայական Certificate of Registration	Կցված է յուրաքանչյուր օդանավի համար: Attached for each aircraft
	8.5 Աղմուկի վկայական կամ համապատասխան այլ փաստաթուղթ: Noise Certificate or equivalent document	Կցված է յուրաքանչյուր օդանավի համար: Attached for each aircraft or type
	Ապահովագրության վկայական (ուղևորների, ուղեբեռի, բեռի, երրորդ անձանց) Certificate of insurance (passenger, baggage, cargo, third party)	Կցված է: Attached
	8.7 Շահագործողի ավիացիոն անվտանգության ծրագիրը Air Operators aviation security programme	Կցված է Attached

ՆՇՈՒՄՆԵՐ
NOTES

5. Եթե շահագործվող օդանավի գրանցման պետությունը և շահագործողի պետությունը տարբեր են, շահագործողները պետք է ներկայացնեն համապատասխան գրություն (անգլերենով) այն մասին, թե ով է իրականացնում օդանավի շահագործման և պիտանիության նկատմամբ վերահսկողությունը, այս պարագայում կիրառելի է նաև պետությունների միջև ԻԿԱՕ-ի 83 ԲԻՍ համաձայնագիրը:

Where the State of Registration of the aircraft operated and the State of the Operator are different, Operators are to provide a letter, in English, stating who has the Operational & Airworthiness control of the aircraft; this may be covered by an ICAO 83bis arrangement between States.

6. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ

Եթե օդանավ շահագործողը իրականացնում է օդային հաղորդակցություններ համագործակցային համաձայնագրերի ներքո՝ որպես շահագործող ընկերություն, բոլոր մարքեթինգային ընկերությունները պետք է նշվեն:

CODE SHARE ARRANGEMENTS

In case the air carrier operates flights on code share basis as an operating partner, all marketing partners have to be indicated.

10 Հայտատուի հայտարարությունը և պայմանների ու պահանջների ընդունման հաստատումը: Applicant's declaration and acceptance of Conditions and Requirements		
Հայտարարում եմ, որ ունեմ սույն հայտը ավիացիոն իշխանությանը ներկայացնելու լիազորություն և, որ սույն հայտում նշված բոլոր տեղեկությունները և ներկայացված փաստաթղթերը ճշգրիտ են և ամբողջական: Ոչ ամբողջական տեղեկատվությունը կարող է հանգեցնել ուշացումների կամ հայտի մերժման: Վերոնշյալ տեղեկություններում/փաստաթղթերում յուրաքանչյուր փոփոխության, փաստաթղթերը ուժը կորցնելու դեպքում՝ Ավիացին իշխանությունը այդ մասին կտեղեկացվի հնգօրյա ժամկետում: Համաձայն ՀՀ օրենսդրության՝ խախտում է համարվում մոլորեցնելու մտադրությամբ ցանկացած կեղծ փաստաթղթի ներկայացումը՝ թույլտվության տրմանը, երկարացմանը կամ փոփոխությանը նպաստելու նպատակով: Ես հաստատում եմ, որ ես կարդացել և հասկացել եմ սույն հայտում ներառված բոլոր հարցերը և դրույթները: Իմ ներկայացրած պատասխանները ճիշտ են՝ իմ իմացությամբ: I declare that I have the legal capacity to submit this application to the Aviation Authority and that all information and documents provided in this application form are true and complete. Incomplete information may result in delay or rejection of the application. In case of any changes in the above information/documentation, termination of submitted documentation the Aviation Authority will be informed in writing within 5 business days. It is an offence under the legislation of the RA to make, with intent to deceive, any false representation for the purpose of procuring the grant, issue, renewal or variation of permission. I certify that I have read and understood all the questions and statements on this form. The answers I have furnished are true and correct to the best of my knowledge and belief.		
Շահագործողի անվանումը Name of Operator	Շահագործողի կոնտակտային անձի անունը և նշանակումը Name of Operator's contact Person & designation	Ստորագրություն/Ամսաթիվ Signature / Date

ՊԱՅՄԱՆՆԵՐ
CONDITIONS

1) Ամբողջ տեղեկատվությունը և փաստաթղթերը պետք է ներկայացված լինեն անգլերեն կամ անգլերեն թարգմանությամբ, կամ ռուսերեն:
All information and documents submitted must be in English or with an English translation or in Russian;

2) Օդանավում գտնվող օդանավ շահագործողի վկայականը, գրանցման վկայականը, թռիչքային պիտանիության վկայականը և նմանատիպ այլ փաստաթղթերը պետք է լինեն վավեր և բոլոր պայմանները, որոնց հիման վրա այդ վկայականները տրվել կամ վավեր են ճանաչվել պետք է պահպանվեն:
Documents such as Air Operator's Certificate (AOC), Certificate of Registration (CoR, Certificate of Airworthiness (CoA) and etc. carried on board the aircraft must be valid at all times, and Any conditions subject to which these certificates were issued or rendered valid must be complied with.

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ:
INSTRUCTIONS

1.1 Լրացնել ընկերության հիմնադրման համապատասխան վկայականում առկա ընկերության ամբողջական անվանումը: Առկայության դեպքում լրացնել նաև ֆիրմային անվանումը, բիզնեսը փաստացի շահագործողի անվանումը և գրանցման համարը:
Please enter the full name of the company as it appears on the Article/Certificate of incorporation of the company. If applicable also enter the Trade Name, Doing-business-as and the Company registration number. In case the applicant is not a company but a natural person, please enter the full name as it appears in your ID Card/Passport.
1.2 Խնդրում ենք լրացնել ընկերության հիմնադրման համապատասխան վկայականում առկա ընկերության գրանցված գրասենյակի հասցեն: Եթե հայտատուն ֆիզիկական անձ է, լրացնել գրանցման հասցեն:
Please enter the address of the registered office as it appears on the Article/Certificate of incorporation of the company. In the case when the applicant is not a company but natural person, please enter the address at which you are registered.

2. Հայտը պետք է լրացվի 10-րդ բաժնում նշված անձի կողմից: Շահագործման և տեխնիկական սպասարկման հետ կապված հարցերը ուղղվելու են այդ անձին:
The application should be completed by the person indicated in Section 10. Queries related to operational and maintenance matters will be referred to this person.

Ձև N 2

Թ ՈՒ Յ Լ Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն 000/20 ____
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ
ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 000/20 ____
TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR TWO AND MORE
CHARTER SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE
REPUBLIC OF ARMENIA

Օդանավ շահագործողը
Aircraft Operator
Պատվիրատուն
Charterer
Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը)
Type(s) of aircraft(s)
Հաճախականությունը
Frequency
Երթուղին
Air route
Թույլտվության գործողության ժամկետը
Permission validity ___ _____20__

_____

(պաշտոնը, անունը, ազգանունը) (position title, name, surname)	_____ (ստորագրություն) (signature) Կ.Տ. Seal	_____ _____ ____ (տալու ամսաթիվը) (date of issue)»:

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ